



**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСКУССТВ**

ГАЯНЕ ПОГОСЯН

КОСТЮМ ВАНСКОГО ЦАРСТВА

**ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
2026**

**NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARTS**

GAYANE POGHOSYAN

COSTUME OF THE KINGDOM OF VAN

**YEREVAN
NAS RA "GITUTYUN" PUBLISHING HOUSE
2026**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԱՅԱՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ

ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ՀԱԳՈՒՍՏԸ



ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2026

ՀՏԴ 7.03:391(=19)
ԳՄԴ 85.03+63.5(5Ը)-426
Պ 797

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պողոսյան Գայանե

Պ 797 Վանի թագավորության հագուստը / Գ. Պողոսյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ
«Գիտություն» հրատ., 2026.- 160 էջ + 24 էջ նկ.:

Գիրքը նվիրված է Վանի թագավորության հագուստի տիպաբանական և գեղագիտական առանձնահատկությունների քննությանը: Ուսումնասիրությունը կատարված է ուրարտական հնագիտական գտածոների, պատկերագրական հորինվածքների և գրավոր տեղեկությունների համեմատական վերլուծությամբ: Գրքում ներկայացված են աստվածությունների և հասարակության տարբեր խավերի հանդերձանքի և արդուզարդի ձևերը: Տրված է նաև տղամարդու և կնոջ հագուստի հավանական պատկերագրական վերականգնություն:

Հասցեագրված է պատմաբաններին, արվեստաբաններին, դիզայներներին, ինչպես նաև հագուստի պատմությամբ հետաքրքրված լայն հասարակությանը:

ՀՏԴ 7.03:391(=19)
ԳՄԴ 85.03+63.5(5Ը)-426

ISBN 978-5-8080-1600-2
DOI: 10.54503/978-5-8080-1600-2
© Պողոսյան Գայանե, 2026



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

СОДЕРЖАНИЕ

CONTENT



ՆԱԽԱԲԱՆ	7
ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԱՀԿԱՆԱՑՈՒՆԵՐ	
ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՀԱԳՈՒՍԸ	22
ԿԱՆԱՆՑ ՀԱԳՈՒՍԸ	37
ПРЕДИСЛОВИЕ	51
БОЖЕСТВА И СМЕРТНЫЕ	
МУЖСКАЯ ОДЕЖДА	66
ЖЕНСКАЯ ОДЕЖДА	81
PREFACE	96
DEITIES AND MORTALS	
MEN'S CLOTHING	110
WOMEN'S CLOTHING	124
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ / СПИСОК ЛИТЕРАТУРЫ / LIST OF REFERENCES	136
ՆԿԱՐԱՑԱՆԿ / СПИСОК ИЛЛЮСТРАЦИЙ / LIST OF ILLUSTRATIONS	147

ՆԱԽԱԲԱՆ

Հագարամյակների խորքից մեր օրեր հասած ուրարտական արվեստի նմուշների քննությունը որոշակի պատկերացում կարող է տալ Վանի թագավորությունում (Ուրարտու, մ.թ.ա. 9–6-րդ դդ.) ավանդական հագուստի ձևերի, հասարակության գեղագիտական ճաշակի, ինչպես նաև հոգևոր և աշխարհիկ պատկերացումների մասին: Հագուստը՝ որպես նյութական մշակույթի բաղկացուցիչ, լավագույնս է արտացոլում յուրաքանչյուր պատմական ժամանակաշրջանի հասարակական կյանքի դրսևորումները: Մինչ օրս լիարժեք քննության չեն ենթարկվել Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. 1-ին հազարամյակում գոյություն ունեցած ուրարտական մշակույթում հագուստի ձևերն ու դրանց ազդեցությունը հետագա հայկական ժողովրդական տարազի ձևավորման վրա: Թեման արդիական է, քանի որ ուրարտագիտության բնագավառում հագուստի վերաբերյալ դեռևս չկա ամբողջական աշխատություն¹: Լիարժեք ուսումնասիրված չեն հագուստի ձևվածքի տիպերը, կառուցվածքային առանձնահատկություններն ու նշանակությունը: Գրավոր սակավաթիվ տեղեկությունների, ինչպես նաև փաստական նյութի բացակայության պայմաններում ուրարտական երբեմնի հանդերձի բարդ համալիրի, ձևվածքների, գործվածքների և հարդարանքի վերաբերյալ սույն հետազոտությունը կատարված է պատկերագրական հորինվածքների և դրանց տիպաբանական գուգահեռների համեմատական քննությամբ: Իհարկե, հնագիտական սակավաթիվ գտածոները չեն կարող ամբողջությամբ հաղորդել ուրարտական հանդերձի բոլոր տիպերն ու գունային համադրությունները: Ինչպես իրավացի նշում է Գ. Մորուն, հագուստը գեղագիտական արժեքից բացի, մշակույթի խորհրդանիշն ու պատկերացումների մարմնավորումն է²: Քանի որ հագուստը փիլիսոփայական առումով կարելի է դիտարկել որպես գեղարվեստ

¹ Ուրարտական հագուստին հակիրճ անդրադարձ է ներկայացված Վ. Հացունու (**Հացունու** 1923) և Ա. Պատրիկի (**Պատրիկ** 1983)՝ հայկական տարազին նվիրված մենագրություններում: Ուրարտագիտության շրջանակում հանդերձի վերաբերյալ մինչ օրս միակ ուսումնասիրությունը Ս. Եսայանի և Ս. Հմայակյանի համահեղինակությամբ հոդվածն է (**Եսայան, Հմայակյան** 1980): Վանի թագավորությունում կանացի հագուստի խնդիրն հեղինակիս կողմից անդրադարձ է կատարված որոշ գիտական հրապարակումներում (**Պողոսյան** 2017; **Սոգոսյան** 2017; **Սոգոսյան** 2024: Թեմային առնչվող դիտարկումներ են կատարվել նաև միջազգային գիտաժողովներում (**Սոգոսյան Գ., Символика женского традиционного костюма в царстве Урарту, Международная научно-практическая конференция «Многогранный мир традиционной культуры и народного художественного творчества»**, Казань, 25.04.2024; **Урартские традиции в армянском национальном костюме, международный культурологический форум «Наука, культура, образование XXI века: междисциплинарный подход»**, Казань, 05.12.2025): Ուրարտական հագուստի համալիրում կարևոր նշանակություն ունեցող զարդերին է նվիրված Օ. Բելլիի մենագրությունը (**Belli** 2010; նույն գրքի գրախոսականը՝ **Batmaz** 2011):

² **Weiwei** 2008:129.

տական ստեղծագործություն³, ուստի ուրարտական պատկերագրության մեջ ներկայացված հանդերձի տիպերով, արդուզարդի ձևերով կարելի է փաստել ժամանակաշրջանի արհեստավորների ստեղծարարական բարձր մակարդակը: Ի տարբերություն նոր և փոփոխական ժամանակների՝ հնում հագուստի ձևերը պահպանվում էին դարեր շարունակ՝ փոխանցվելով սերնդեսերունդ: Այս առումով ուշագրավ է հանդերձ (costume, костюм) բառի նախնական ստուգաբանությունը, որը տարբեր լեզվաընտանիքներում հանգում է հենց սովորույթ կամ ավանդույթ գաղափարին⁴: Վանի թագավորության հագուստի ձևերի հավանական տեսաբանական վերականգնությունը փաստական նյութի սակավության պայմաններում հնարավոր է դարձել հարևան մշակույթներում պահպանված պատկերաձևերի և դրանց վերաբերյալ տեղեկությունների համադրմամբ, քանի որ տարածաշրջանի հոգևոր և աշխարհիկ կյանքում, այդ թվում նաև հանդերձում, առկա են նմանություններ և փոխազդեցություններ: Թեև Վանի թագավորությունում ևս տեղ են գտել հին Մերձավոր Արևելքում լայնորեն տարածված հանդերձի հիմնական ձևերը (հատկապես ասորաբաբելոնական), այնուամենայնիվ ուրարտական նմուշները տարբերակելի են իրենց ինքնատիպությամբ և տեղական մշակութային առանձնահատկություններով: Հանդերձի ձևավորումն ու զարգացումը պայմանավորված են նաև թելերի և գործվածքների արտադրությամբ, որը թույլ է տվել ստեղծել տվյալ ժամանակաշրջանին և բնակլիմայական պայմաններին հարմար հագուստի ձևեր: Չի բացառվում նաև ներմուծված արտադրանքը, քանի որ տեղեկություններ են պահպանվել առևտրային ճանապարհով Ասորեստանից և Բաբելոնից բերված տարբեր գործվածքների մասին⁵: Կարմիր բլուրում (Հայաստան, Երևան) Թեյշեբաինի քաղաքի հնագիտական պեղումների արդյունքում հայտնաբերված գործվածքի մնացորդներն ու որմնապատկերների բեկորները հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու ուրարտական հագուստում կիրառված հավանական գունային լուծումների մասին: Գեղարվեստական հորինվածքներում ներկայացված հանդերձի ձևերը վկայում են, որ հագուստը ստեղծվել է տվյալ ժամանակաշրջանի կրոնական և հասարակական պատկերացումներին, ինչպես նաև նյութական միջոցներին համապատասխան: Դժվար է պահպանված պատկերագրական օրինակներով վերստեղծել ուրարտական հանդերձն իր ամբողջության մեջ, քանի որ դրանք ունեն կրկնվող կանոնիկ ձևաչափ, և բացակայում է հասարակության բոլոր խավերի ընդհանուր նկարագիրը: Պատկերագրական աղբյուրներն առավելապես

³ Barbieri, Pantouvaki 2016:4.

⁴ Бочарникова 2011:273–277.

⁵ Գրիգորյան 2011:12:

ապահովում են աստվածությունների, սրբազան էակների և ազնվականների հանդիսավոր կերպարներով: Որոշ գտածոներում հանդիպում են նաև հոգևոր սպասավորների, զինվորների, ծառաների, երաժիշտների, ակրոբատների և այլոց կերպարային մարմնավորումներ: Գեղարվեստական հորինվածքներում հագուստի ճոխ լուծումները վկայում են Վանի թագավորությունում զարգացած անասնապահության փաստը (պահպանվել են հիշատակություններ ասուրական և ուրարտական գրավոր աղբյուրներում, ինչպես նաև փաստացի ապացուցվել է հնագիտական գտածոներով)⁶, որը նպաստել է ոստայնագործության զարգացմանը: Միջնադարյան Հայաստանում բարձր մակարդակի հասած ոստայնակության (ջուլիակագործություն, մանածագործություն), կարպետագործության, ասեղնագործության ավանդույթները խարսխված են հնագույն ժամանակներից սերնդեսերունդ փոխանցված կիրառական արվեստի հարուստ փորձի վրա⁷: Կարմիր բլուրից հայտնաբերված սեպագիր մի տեքստում կա հիշատակություն տարբեր կենդանիներից ստացված կաշվե հումքի և բրդե հանդերձի մասին⁸: Ըստ երևույթին, ժամանակին եղել են գործվածք արտադրող արհեստավորներ և համքարություններ, ինչպես օրինակ հարևան մշակույթներում (այսպես կոչված կապադովյան սալերում հիշատակված են բրդե և վուշե գործվածքներ արտադրող համքարություններ և արհեստավորներ⁹): Հաշվի առնելով, որ հնում արհեստները փոխանցվել են սերնդեսերունդ¹⁰, ապա դժվար չի կոռուցել, որ հայկական միջնադարյան մշակույթը որդեգրել է որոշակի ավանդույթներ: Քրիստոնեության տարածումից հետո էլ յուրացվել և ընդօրինակվել են նախկինում գոյություն ունեցած արվեստի ձևերն ու կուտակված փորձը¹¹: Վանի թագավորությունում բուրդը եղել է գործվածքի ստացման հիմնական հումքը¹²: Այս առումով կարելի է գուգահեռ անցկացնել շատ դարեր անց մեծ տարածում գտած թանկարժեք, սպիտակ «Էրմին» կոչվող մորթու վերաբերյալ, որն իր անունը ստացել է Արմենիա բառից և հայ առևտրականների միջոցով տարվել է Եվրոպա¹³: Գրավոր աղբյուրներից տեղեկանում ենք նաև ուրարտական հասարակության մեջ տղամարդ դերձակների գոյության մասին: Նորաստրեստանյան մի տեքստում հիշատակություն կա ոմն Նարագե անունով գլխավոր դերձակի մասին¹⁴ (սա հի-

⁶ Арутюнян 1964.

⁷ Դավթյան 1981:5–6:

⁸ Арутюнян 2001:398 (№521).

⁹ Boucher 1967:43.

¹⁰ Март 1915:16–17.

¹¹ Դավթյան 1981:5–6:

¹² Ծիֆցի 2012:36.

¹³ Gevorgian, Bernardi, Nercissian, Stepanian, Massoumian 1974.

¹⁴ Lanfranchi, Parpola 1990 (№91).

շատակվում է ուրարտական արքաներից մեկի՝ հավանաբար Ռուսա Սարդուրորդու վրա կազմակերպված դավադրությանը մասնակցելու առիթով)¹⁵: Արքայական պալատներում դերձակներ ունենալու ավանդույթը Հայաստանում պահպանվել է նաև հետագա ժամանակներում¹⁶: Ասորեստանի Սարգոն 2-րդ արքան (մ.թ.ա. 722/721–705 թթ.) Աշշուր աստվածությանն ուղղված իր նամակում Ուրարտու ձեռնարկած արշավանքից ստացված ավարը թվարկելիս, հիշատակում է նաև վուշե և բրդե կապտամանուշակագույն (ըստ երևույթին «ծիրանի»¹⁷) և կարմիր զգեստներ¹⁸: Հայկական լեռնաշխարհը հարուստ է բուսական և հանքային ծագում ունեցող տարբեր ներկանյութերով, և ամենայն հավանականությամբ, կարմիրի ստացումը հնում ևս ապահովվել է կարմրորդի ներկով: Հայաստանում գոյություն ունեցող բուսական ծագման ներկանյութերից ամենաառաջնակարգը «որդան կարմիր»-ն է: Այն հայտնի է նաև որպես «Հայկական պուրպուր», «Հայկական կոշենիլ»¹⁹ կամ «դրմզի» (թուրքերեն *krmizi* (պարսկերենից փոխառված)) անուններով²⁰: Ներկայումս «կարմիր միջատի»²¹ տարածման տեղագրությունը Հայաստանի Արմավիրի և Արարատի մարզերի Արագածի և Ջրառատ համայնքներում է: Որոշ տեղեկությունների համաձայն Հայկական լեռնաշխարհում հայտնի ներկանյութ ապահովող միջատը սնվել է հատուկ բույսի արմատներով²²: Կարմիր ներկի կիրառությունը Արևելքում հայտնի է եղել հնագույն ժամանակներից ի վեր, որի վառ վկայությունը կարելի է գտնել նաև Աստվածաշնչում²³: Հելլենիստական շրջանում Արտաշատ քաղաքում (Հայաստան) եղել են ներկատներ, որտեղ գործվածքներն ըստ երևույթին ներկվել են որդան կարմիրով²⁴: Բացի որդան կարմիրը, Հայկական լեռնաշխարհում տարածված են եղել նաև այլ ներկանյութեր, ինչպես օրինակ տորոնը (*rubia*, բուսական ծագման), լաջվարդը (հռոմեացի նշանավոր պատմաբան և ռազմական գործիչ Պլինիոս Ավագի հիշատա-

¹⁵ **Գրեկյան** 2023:29:

¹⁶ **Еремян** 1953:30.

¹⁷ Միջնադարյան մեկնիչները ծիրանի ասելով հասկացել են արքայական կարմրակապտագույնը կամ կարմրամանուշակագույնը (*purple*):

¹⁸ **Frame** 2021:302 (№ 65) (366); **Дьяконов** 1951 (№ 2):331.

¹⁹ «Armenian Cochineal», «Ararat Cochineal»: «Որդան կարմիր»-ից ստացվող նշանավոր ծիրանին համարվել է հայկական արքայական տան առանձնաշնորհը և ստացել է «հայկական ծիրանի» անվանումը:

²⁰ **Ստեփանյան** 2003 (ա):390:

²¹ Հայերը կարմրաորդի յուրահատուկ մշակման արդյունքում ստացել են մուգ և վառ կարմիր ներկ, բալասաններ և այլն: Այն լայնածավալ կիրառություն է գտել զորագործության, մանածագործության, որմանակարչության և մանրանկարչության մեջ: Այս ամենը ապահովվում է միայն միջատի էգերի շնորհիվ:

²² **Gevorgian, Bernardi, Nercissian, Stepanian, Massoumian** 1974.

²³ **Մելիքսեթ-Բեկ** 1946:17; **Յայտնություն Յովհաննու**, XVIII, 12, 16:

²⁴ **Еремян** 1953:29.

կության մեջ ներկանյութը կոչվում է «Armenium») և այլն²⁵: Կարմիր բլուրում գտնվել են մեծ թվով իլիկների ոսկրե և քարե գլխիկներ, ջուլհակի դազգահների կավե և երկաթե տարրեր, տարբեր տեսակի թելերի և գործվածքների մնացորդներ²⁶: Նույն վայրում գտնվել են նաև մեծ քանակությամբ բրոնզա թելերի կծիկներ, անգամ քնջութից ստացված թելերի մնացորդներ²⁷: Ա. Վերխովսկայայի կարծիքով հայտնաբերված մնացորդները ներկված են եղել կարմիր, կապույտ և դեղին գույներով²⁸, որոնք նաև հետագա հայկական տարազի հիմնական գույներից են: Դատելով ուրարտական որմնանկարների պահպանված բեկորներից²⁹, հագուստը ստեղծվել է կերպարվեստում տարածված նույն գունապնակով: Հայտնաբերված գործվածքի պատառիկներից մեկի վրա պահպանվել են անգամ զարդանախշ հյուսվածքի հետքերը³⁰ (նկ. 1-3), որը ստացվել է հենքաթելմիջնաթելի հորիզոնական և ուղղահայաց հակադիր դասավորությամբ տարբեր գույնի թելային փոխանցումներով: Դատելով տարբեր կերպարների պատկերներից՝ հագուստում տարածված են եղել հատիկանախշ, եղննանախշ, գծանախշ և վարդյականախշ գործվածքները: Մանածագործական իրեր հայտնի են նաև Վանի թագավորության այլ հնավայրերի պեղումներից: Կարմիր բլուրում, Թոփրակ-կալե (Ռուսախինիլի, Վան քաղաքի հյուսիս-արևելքում, Թուրքիա), Այանիս (Վանա լճի ափին, Թուրքիա) և Բադնոց (Պատնոց, Քարակիլիսա, Ադրի մարզ, հայկական պատմական անունը՝ Քարբեր, Թուրքիա) հնավայրերում հայտնաբերված գործվածքի նմուշները փաստում են, որ Վանի թագավորությունում կիրառվել են տարբեր որակի ու հաստության գործվածքներ: Կարմիր բլուրից գտնված խավոտ գործվածքի որոշ պատառիկներ³¹ վկայում են, որ Վանի թագավորությունում կրել են նաև թավշյա հագուստ: Ուրարտական հագուստը, դատելով մեր օրեր հասած որմնանկարչական սակավաթիվ հորինվածքներից, ինչպես նաև Կարմիր բլուրից գտնված փայտե արձանիկների վրա պահպանված կարմիր, սպիտակ և սև գունահետքերից³², եղել է բազմագույն, սակայն ըստ երևույթին առավել հարգի են եղել վուշե և բրդե կարմիր, մանուշակագույն գործվածքները³³ (ենթադրվում է, որ օգտագործվել է նաև բամբակ³⁴): Վուշե գործվածքը Միջագետքում եղել է առավել թանկարժեք և արտադրվել է առավելա-

²⁵ Ստեփանյան 2003 (p):298–300; Сейранян 1982:47; Plin XXXV, 28, I.

²⁶ Եսայան 1982:26–27:

²⁷ Пиотровский 1950:34.

²⁸ Пиотровский 1955:67–68.

²⁹ Հովհաննիսյան 1973:

³⁰ Пиотровский 1955:68; Çifçi 2012:38.

³¹ Пиотровский 1950:34.

³² Եսայան, Հմայակյան 1980:203:

³³ Дьяконов 1951(№2):331.

³⁴ Пиотровский 1955:70.

պես վերնախավի, քրմերի հանդերձանքի և աստվածությունների արձանների հարդարման համար³⁵: Հայկական լեռնաշխարհում մետաքսի գործածությունն ուրարտական ժամանակներից ի վեր փաստում է Թուփրակ-կալեում հայտնաբերված պատառիկը³⁶: Չի բացառվում, որ ուրարտական վերնախավի ճոխ զգեստները կարվել են հենց մետաքսե գործվածքից: Մետաքսի արտադրությունը կապված է շերամապահության հետ, և թերևս պարտադիր չէ, որ այն լիներ միայն ներմուծված (ինչպես ենթադրվում է Չինաստանից): Հայկական լեռնաշխարհում հին ժամանակներից ի վեր շերամապահությամբ զբաղվել են Տիգրանակերտի, Խարբերդի, Սյունիք-Արցախի, Արարատյան հովտի, Աշտարակի, Տավուշի և Գողթնի տարածաշրջաններում³⁷: Միջնադարյան Հայաստանում օրինակ, մետաքսե կտորները գործվում էին միագույն, գծանախշերով և ծաղկանախշերով: Ուսումնասիրությունների համաձայն ցածր խավի հանդերձը, ինչպես այլ հնագույն մշակույթներում³⁸, պետք է ձևով լիներ նույնը, սակայն տարբերակվեր միայն գործվածքով և հարդարանքով³⁹: Հայտնաբերված պատկերագրական նյութերը թույլ են տալիս որոշակի չափով պատկերացում կազմել ուրարտական արական և իգական սեռերի հագուստի հիմնական ձևերի մասին: Կարելի է ենթադրել, որ Վանի թագավորությունում աստվածությունների և մահկանացուների՝ հատկապես վերնախավի ներկայացուցիչների հագուստի ձևերում տարբերություններ չեն եղել, քանի որ աստվածներին մարդիկ պատկերացրել և պատկերել են իրենց նմանությամբ: Համադրելով Հայկական լեռնաշխարհի միջնադարյան և ուրարտական ժամանակների կանանց կերպավորումները՝ հանդերձանքի կառուցվածքում կարելի է գտնել նմանություններ: Ըստ ամենայնի ուրարտական ամենօրյա և տոնական հագուստի հիմնական ձևվածքը նմանատիպ է, տարբերվել է միայն հարդարանքն ու գործվածքը (նույն ավանդույթը շարունակվել է նաև հետագայում՝ հայոց մեջ: Օրինակ Սյունիքի շրջանի կանայք ունեցել են երկու ձեռք հագուստ՝ տան և դրսի. առաջինը հասարակ, մյուսն ավելի թանկարժեք գործվածքից⁴⁰): Դատելով պատկերագրական հորինվածքներից՝ Վանի թագավորությունում զգեստի հիմնական ձևվածքը եղել է տունիկայանման կտրվածքով (տունիկայի հիմքի վրա են ձևավորվել նաև վաղ շրջանի հայկական տարազանները): Հագուստի համալիրի հիմնական բաղկացուցիչ է եղել վերնազգեստ-բաճկոնը (պատմուճան, արխալուղ), որը հաճախ տեսնում ենք աստ-

³⁵ Pendergast 2004:53.

³⁶ Հմայակյան, Հովսեփյան, Հմայակյան, Տիրացյան 2023:106; Lehman-Haupt 1931:967.

³⁷ Ավագյան 1983:10:

³⁸ Бардман 1990:235–236.

³⁹ Հացունի 1923:34:

⁴⁰ Լալայեան 1879:61:

վածությունների հանդերձանքում: Ուրարտական տարագային համալիրը կազմված է եղել գեղագիտորեն համադրված տարբեր երկարության վերնահագուստից և զգեստից, գլխանոցներից ու արդուզարդից: Տարբեր կերպարների արտաքին նկարագրից ակնհայտ է հանդերձի ձևվածքի վարպետորեն կատարված նախագծումը և ուրվագծային կոկիկ նստեցումը մարմնի վրա: Հագուստի գեղագարդումն ու գունային համակարգը, ինչպես նաև ընդհանուր նկարագիրը պայմանավորված են ժամանակաշրջանի մշակութային և հոգևոր պահանջներով:

Վանի թագավորության դեկորատիվ-կիրառական արվեստում, այդ թվում նաև հանդերձում, իրենց գեղագիտությամբ և կիրառական նշանակությամբ կարևոր տեղ են զբաղեցնում փորագրագարդ գոտիները: Հանդերձը մետաղական գոտիներով համալրելու ավանդույթը թերևս անցել է հայկական տարազին, որում իր կարևոր տեղն են գտել արծաթե մանրարուրք մշակմամբ գեղաշուք քամար-գոտիները: Բրոնզե գոտիներն իրենց պատկերագրական հատկանիշներով ունեն նաև կարևոր տեղեկատվական գործառույթ՝ Վանի թագավորության հասարակական և հոգևոր կյանքի, կրոնա-ծիսական ավանդույթների, կենցաղի և ռազմական կյանքի բացահայտման գործում (նկ. 4–19): Հայտնի հարյուրավոր գոտիներ հայտնաբերվել են ուրարտական թագավորության տարածքն ընդգրկող շրջաններից (հնագիտական պեղումների և գանձագողության արդյունքում)՝ հայտնվելով աշխարհի տարբեր երկրների թանգարաններում և անհատական հավաքածուներում: Գոտիները հիմնականում պատրաստված են մետաղական բարակ թիթեղներից, ունեն տարբեր լայնք և երկարություն (մոտ 5,5–17 սմ լայնք, 70–120 երկարություն): Գեղարվեստական հարդարումը կատարված է դարձերեսի կողմից սեղմման միջոցով և արտաքինից հետագա մշակմամբ: Առկա են անցքեր ողջ երկայնքով՝ նախատեսված կաշվի կամ գործվածքի վրա ամրացնելու համար: Պատկերագրական բազմաթիվ հորինվածքներից, այդ թվում նաև տարբեր գոտիների գեղարվեստական հարդարանքից դատելով՝ գոտիները լայնորեն կիրառվել են տարբեր սոցիալական դիրք ունեցող թե՛ տղամարդկանց և թե՛ կանանց հանդերձում (հայտնաբերվել են նաև փոքր չափսի գոտիներ, ենթադրվում է մանկական⁴¹): Կանայք և տղամարդիկ Հայկական լեռնաշխարհում գոտիներ կրել են ավելի վաղ ժամանակներից, որի վառ ապացույցն են բրոնզե դարյան հնավայրերի պեղումներով հայտնաբերված նմուշները⁴²: Ուրարտական գոտիների գեղարվեստական հարդարանքում ակնհայտ է ժամանակաշրջանի գեղարվեստական և հոգևոր մշակույթով պայմանավորված համակարգված ընդհանուր պատկերահամակարգային մոտեցումը: Գոտիները տարբերակվում

⁴¹ De Brestian 2005–2007:29.

⁴² Маргироян 1964:136–137.

են ժամանակային և պատկերատիպային հատկանիշներով⁴³: Կարելի է ենթադրել, որ գոտիներն ըստ իրենց գեղարվեստական հարդարանքի՝ տարբերվում են նաև առօրեական և հատուկ տոնածիսական նշանակությամբ: Գոտիներին բնորոշ է ռեգիստրային բաժանումներով երկչափ հարթային պատկերագրություն՝ կիսադեմ (պրոֆիլ) պատկերների կրկնությամբ, որ հայտնի է դեռևս հնագույն եգիպտական և միջագետքյան արվեստից: Բոլոր դեպքերում պատկերագրումը կատարված է գոտիների երկայնական ձևին համապատասխան հորիզոնական զարդագոտնորման սկզբունքով: Ըստ գեղարվեստական հարդարանքի կարելի է դասակարգել՝ առանց որոշակի գեղագիտական հարդարման, սյուժետային թեմատիկ մեկնությամբ, կրկնվող ռապպորտային պատկերամոտիվներով գոտիներ: Սյուժետային բարդ կառուցվածքով գոտիներն ունեն որոշակի թեմատիկ առանձնահատկություններ, և կարելի է ասել, նաև ժանրային ուղղվածություն, ինչպես օրինակ որսի (ծիսական), ռազմի մոտիվներ և թեմատիկ համադրային լուծումներ: Առանց սյուժետային մեկնության պարզ հորինվածքները կառուցված են առավելապես կրկնվող զարդամոտիվային կամ պատկերամոտիվային ռապպորտի սկզբունքով: Սրանք իրենց հերթին առանձնանում են պարզ և բարդ կառուցվածքներով: Տարբերակելի են երկրաչափական ռճավորմամբ հորինվածքները երկրաչափական տարրերի կիրառմամբ, ինչպես օրինակ կետանախշ, գծանախշ, ցանցահյուսք (բջջային զարդանախշեր) և այլն: Բուսական ռճավորման դեպքում կիրառված են ռճավորված բուսական տարրեր: Բազմաթիվ են նաև մարդակերպ (անտրոպոմորֆ) և կենդանիներով (զոոմորֆ) պատկերային ռճավորումները: Հանդերձում կիրառված զարդանախշերն իրենց բնույթով ոչ միայն լրացյալ տարր են գեղագիտական հարդարանքում, այլև ինքնուրույն արվեստի տեսակ: Ուրարտական զարդանախշերը կամ զարդամոտիվները իրենց կառուցվածքում ունեն ժամանակաշրջանի հոգևոր պատկերամտածողությանը համապատասխանեցված որոշակի պայմանական համակարգ՝ կազմված առավելապես դիցակրոնական երևակայումների վիզուալիզացված գրաֆիկական պատկերներից: Գործվածքի և արդուզարդի պարագաների պատկերադաշտերում երկրաչափականացված զարդամոտիվների համադրություններում մեծ տեղ ունի մաթեմատիկական տրամաբանությունը: Արդուզարդի կամ զարդանախշերի տեղադրումները հագուստի գեղարվեստական հարդարանքում պայմանավորված են ոչ միայն զուտ գեղագիտական, այլև կիրառական և ծիսական նշանակությամբ: Ուրարտական զարդանախշային համակարգը, ինչպես հնագույն այլ մշակույթներում, անցել է զարգացման երկար ճանապարհ՝ պահպանելով սակայն ավանդական մոտեցումներն ու առանձնահատկությունները: Այն իր

⁴³ Есаян 2002:91.

ձևով հանդիսանում է հագուստի առանձին մասերի և գործվածքի գեղարվեստական ընկալման համար կարևոր և տեղեկատվական բաղադրիչ: Երկրաչափականացման ճգտող գրաֆիկորեն պարզեցված զարդապատկերների հիմքում շատ հաճախ ընկած են իրական երևույթներ. մարդիկ, բույսեր, կենդանիներ և այլն: Անհրաժեշտ է նկատել, որ խորհրդաբանական զարդամոտիվներում կամ զարդանախշերում, սրբազան կամ առեղծվածային երևակայումները ևս տրված են իրական հիմքով պատկերների միջոցով: Ուրարտական արվեստում ամենախորհրհնակ և ամենակիրառված զարդամոտիվը կենաց ծառի և պտղաբերության սրբազան գաղափարի հետ ասոցացվող պատկերաձևերն են, որոնք տեղ են գտել թե՛ կերպարվեստի և թե՛ դեկորատիվ-կիրառական արվեստի տարբեր հորինվածքներում: Բավական յուրօրինակ կերպով են կիրառված նման զարդամոտիվները հատկապես մետաղական գոտիների հարդարանքում: Գոտիների և արդուզարդի այլ պարագաների, ինչպես նաև հավանաբար գործվածքների գեղարվեստական հարդարանքում, կենաց ծառապատկերներն ու բուսական հիմքով տարրերը ենթարկվել են գրաֆիկական երկրաչափականացման ու ոճավորման: Երկրաչափական գծապատկերներում առավել տարածված են շրջապատող աշխարհից փոխառված իրական ձևեր, ինչպես օրինակ սերմնահատիկներ, բույսեր, երկնային մարմիններ: Զարդաձևերում ակնհայտ են նաև արական և իգական նախասկզբի հետ ասոցացվող պատկերաձևերը (նույն ավանդույթը շարունակվել է նաև հայկական տարազային համակարգում): Զարդաձևերը թեև լրացյալ միջոց են հանդիսանում, այնուամենայնիվ դրանք պատկերադաշտում իրենց վրա կրում են գեղագիտական և խորհրդաբանական կարևոր գործառույթներ: Դրանց ընտրությունը թերևս պայմանավորված է ժամանակաշրջանի հիմնական պատկերահամակարգի ավանդականությամբ: Ուրարտական զարդաձևերն ունեն իրենց հատկանշական դիրքը, ռիթմը, ոճն ու իմաստային նշանակությունը: Ուրարտական արվեստում զարդանախշը մարդկանց կողմից ստեղծված տեսողական և գաղափարային ընկալումների պատկերումն է զարդանախշի կամ պատկերամոտիվի ձևով: Զարդաձևերը ժամանակի ընթացքում փոփոխել են իրենց ոճը, սակայն որոշակի կերպով պահպանել են կառուցվածքային հիմնական գծերը: Ուրարտական զարդարվեստը, որը նմանություններ ունի ասուրականի հետ, կառուցված է առաջին հերթին տվյալ դիցապետական ժամանակաշրջանի գաղափարային բովանդակությամբ, որից էլ բխում են գեղարվեստական ձևերն ու արտահայտամիջոցները: Յ. Բրոկմանի բնորոշմամբ զարդարվեստում ոճն արտացոլված է առարկայի բնույթին համաձայնեցված պատկերաձևերով, որոնք ստեղծված են ժամանակի գեղագիտական պահանջ-

ներին համապատասխան⁴⁴: Ուրարտական հանդերձում գարդաձևերը կարելի է առանձնացնել ըստ իրենց տիպային հատկանիշների: Ուրարտական եզրագարդային գարդանախշերն իրենցից առավելապես ներկայացնում են ոճավորված բուսանախշեր, կետանախշեր, զիզգագ, եղննանախշ, քառանկյուն, վարդյակ: Կարելի է նկատել, որ երիզային գարդանախշերը սովորաբար տեղադրվում են տարբեր գեղարվեստական հորինվածքների, ինչպես նաև զգեստի վերին և ստորին հատվածներում՝ տեսողական և իմաստային ավարտունություն հաղորդելով: Ուրարտական գարդարվեստում կիրառված վարդյակը սովորաբար կիրառված է թե՛ փակ և թե՛ բաց գարդաձևերում: Գործվածքի և այլ մակերևույթների հարդարանքում վարդյակաձև գարդանախշերը կիրառված են հավասարաչափ բաժանումներով, սիմետրիկ կրկնությամբ, ռիթմիկ դիրքային փոփոխություններով: Գործվածքներում առավելապես կիրառված են քառանկյան կամ շրջանի մեջ ներառված վարդյակներ: Որպես օրինակ կարելի է դիտարկել աստվածությունների հանդերձի գործվածքի գարդանախշման կառուցվածքը, որոշ գոտիների հարդարանքը և այլն: Որոշ գոտիների վրա պահպանվել են ամրացման օղակներն ու դեկորատիվ ամրակները: Հատկանշական է հետագա հայկական ժողովրդական տարագում տարբեր տեսակի գործվածքներից և մետաղներից գոտիների գործածությունը երկու սեռերի հանդերձանքում՝ յուրաքանչյուր սեռին հատուկ խորհրդաբանական նշանակությամբ: Գոտիների գործվածքն ու գարդանախշերը հնում ծառայել են որպես կրողի սոցիալական դիրքի ցուցիչ⁴⁵: Հայոց մեջ, տղամարդկանց տարագային համալիրում գոտիները հաճախ ծառայել են իբրև գրպան՝ ծխախոտի կամ այլ առարկաների համար⁴⁶: Կիրառական նման մոտեցում կարելի է փաստել նաև Վանի թագավորությունում՝ արական սեռի՝ հատկապես աստվածությունների և ռազմիկների պատկերագրական կերպարներում գոտուց կախված զինատեսակների օրինակով (այս երևույթը նույնությամբ հայոց մեջ ներկայացված է սվին-դանակները կամ դաշույնը գոտուց կախելու ձևերում): Սպառազենում բավական ուշագրավ են հատկապես լայն գոտիները, որոնք Հին Արևելքում հայտնի են հատկապես զինվոր-նետաձիգների կերպարներից⁴⁷: Ուրարտական մշակույթում գոտին կիրառական գործառնություններից բացի ունեցել է նաև մոգական նշանակություն: Ամենայն հավանականությամբ պատերազմների, որսի և ծիսակատարությունների ժամանակ քրմերը, ցեղապետերը, արքաներն ու զորավարները գոտեկապվել են գործառնական և մո-

⁴⁴ Брокман 1905; Степанова 2011:14.

⁴⁵ Ավագյան 1983:64:

⁴⁶ Ստեփանյան 2007:17:

⁴⁷ Пиотровский 1962:73.

գական նկատառումներով⁴⁸: Գոտին որպես մոգական շրջանակ՝ օղակելով մարմինը պաշտպանել է այն չարքերից⁴⁹: Արքայական խորհրդանշական գոտևորման և գոտու ծիսական գործառույթների վերաբերյալ տեղեկություններ են պահպանվել նաև հին խեթական աղբյուրներում⁵⁰: Պաշտամունքային նկատառումներից է բխում թերևս աստվածություններով և սրբություններով գոտիների պատկերագրությունը⁵¹: Սրբազան պատկերները կրողին իր պատկերացումներում հավանաբար մոտեցրել են աստվածային թագավորությանը⁵²: Մարմնի պաշտպանական օղակումը գոտիներով ուղեկցում էր մարդկանց նաև հետմահու կյանքում, որի վկայությունն են թաղումներում հայտնաբերված բազմաթիվ գտածոները: Ուրարտական գոտիների մեծ մասի հարդարումը երևակայական էակների պատկերներով ևս պայմանավորված է եղել դրանց չարապահական նշանակությամբ⁵³: Պատկերագրական նյութերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ գոտիները եղել են ոչ միայն մետաղական, այլև տարբեր գործվածքներից, որոնց վերապրուկն են թերևս Վասպուրականի (պատմա-աշխարհագրական շրջան պատմական Հայաստանի հարավում) տարազում հյուսքեն կամ շալե զարդանախշված տարբերակները: Չի բացառվում, որ ուրարտական մշակույթում, ինչպես հետագա հայկական ավանդական պատկերացումներում գոտին եղել է կանանց տարիքային և սոցիալական խորհրդանշական ցուցիչ⁵⁴: Հայկական հարսանեկան ավանդույթում գոտին կապվել է հարս ու փեսայի խորհրդանշական կերպարների հետ և եղել ամենացանկալի նվերներից մեկը⁵⁵ (ազգագրական որոշ տվյալների համաձայն, հարսի հանդերձում գոտի-նարտը հանդիսացել է կնոջ կուսության և անաղարտության խորհրդանիշ: Փեսան չէր մոտենում հարսին, մինչև վար չէր առնվում նարտը⁵⁶): Ինչպես կարելի է դատել ուրարտական գտածոների պատկերագրությունից, գոտիներ կրել են թե՛ աստվածությունները, և թե՛ սոցիալական տարբեր դասային պատկանելության անձինք: Ամենայն հավանականությամբ, Վանի թագավորությունում յուրաքանչյուրն ունեցել է իր սոցիալական կարգավիճակին համապատասխան գոտի (ըստ Վ. Հացունու հայոց մեջ ևս տարբերակվել են արքայական, իշխանական և այլոց գոտիները⁵⁷): Գոտիների գեղարվեստական հարդարանքը հանդերձի համալի-

⁴⁸ Арутюнян 2009:42.

⁴⁹ Ստեփանյան 2007:17:

⁵⁰ Ардзинба 1982:124.

⁵¹ Пиотровский 1962:73.

⁵² Taronci 2014:3.

⁵³ Curtis 1996:118-119.

⁵⁴ Սամուելյան 1931:261; Մարգարյան 2001:67:

⁵⁵ Варданян 2024:139.

⁵⁶ Իփեկեան 1913:103:

⁵⁷ Հացունի 1923:100:

րում ևս զանազանվում է ըստ կրողի սոցիալական դիրքի և կիրառական նշանակության:

Վանի թագավորությունում տղամարդիկ և կանայք հանդերձը լրացրել են բազմապիսի զարդերով. ոսկե, սարդիոնե, ագաթե, բյուրեղապակե, ջնարակապատ խխունջներից ուլունքներով, արծաթե և ոսկե օղերով, ոսկե, արծաթե և բրոնզե ապարանջաններով, մեդալիոններով, կիսալուսնաձև զարդերով, մատանիներով, հերակալներով, շիգդերով, շքասեղներով և այլն⁵⁸: Հնագիտական պեղումների արդյունքում հայտնի են գեղարվեստական տարբեր ձևավորմամբ արդուզարդի զանազան նմուշներ (20–39): Հայտնաբերված կախազարդային բազմաթիվ նմուշներն իրենցից ներկայացնում են առավելապես սկավառակաձև մեդալիոններ և կիսալուսնաձև պարանոցի զարդեր (պեկտորալ, լուսնազարդ), որոնցից շատերի գեղարվեստական հարդարանքը ցուցադրում է սրբազան հանդերձի հիմնական տիպերը (հայտնի են նաև կնիք-կախազարդեր, տարբեր տիպի հմայիլներ): Դրանցում առկա պատկերները թույլ են տալիս լրացնել սրբազան կերպարների և մահկանացուների հագուստի առանձնահատկությունների մասին գիտելիքները: Կասկածից վեր է, որ թանկարժեք մետաղներից և հարուստ գեղարվեստական հարդարմամբ զարդեր կրել են հենց վերնախավի ներկայացուցիչները: Արծաթե և ոսկե կախազարդեր, ապարանջաններ և այլ զարդեր կրել են թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ: Դատելով պատկերագրությունից՝ կախազարդերն ունեցել են պաշտամունքային բնույթ⁵⁹: Իրենց աստվածությունների խորհրդանշաններով զարդեր, ինչպես օրինակ լույսի խորհրդանշան համարվող լուսնազարդերն ու արևային սկավառակները, կրում էին նաև Ասորեստանի արքաները⁶⁰: Սկավառակաձև մեդալիոնների և կիսալուսնաձև զարդերի հարդարանքում առավելապես պատկերված են պաշտամունքային բնույթի հորինվածքներ, որից դատելով կարելի է եզրակացնել, որ դրանց կրումն ու վրայի պատկերազարդումը մարդկանց համար ունեցել է կարևոր և սրբազան նշանակություն, միգուցե խորհրդանշել աստվածությունների հետ կապը⁶¹ (կանանց պատկերներով ուրարտական որոշ լուսնազարդերի նշանակությունը կարելի գուցա հետել օրինակ Վասպուրականի շրջանում կիսալուսնաձև վզնոցների հետ, որոնք կանանց արդուզարդում խորհրդանշել են կանացի սկիզբը, կապվել բեղմնավորության և արգասավորության հետ⁶²): Բացի դա, տարբեր գեղարվեստական հարդարանքը

⁵⁸ Հմայակյան 2007:172–185:

⁵⁹ Poghosyan 2025 (a):187.

⁶⁰ Black, Green 2004:31.

⁶¹ Poghosyan 2025 (a).

⁶² Ազուվեցի 2010:15:

ևս հավանաբար պայմանավորված է եղել կրողի սոցիալական դիրքով⁶³: Սկավառակաձև մեդալիոնների լայն կիրառությունը փաստվում է ուրարտական թագավորության տարբեր տարածքներից հայտնի նմուշներով: Մեդալիոններն աչքի են ընկնում շրջանաձև մակերեսին համապատասխանեցված հորինվածքներով, վերնամասում հիմնականում ունեն կախիկ: Մետաղե թիթեղի վրա փորագրագարդումը կատարված է դարձյալ թիթեղի դարձերեսային սեղմամբ և դիմերեսային հատվածում հատուկ սուր գործիքով վերջնական գեղարվեստական հարդարմամբ⁶⁴: Մեդալիոնների շրջանաձևությունն ու դրանցում ներկայացված աստվածությունների գլխի (ամենայն հավանականությամբ դիցարանի գլխավոր Խալդի աստծո) ընդգծումը շրջանաձև լուսապսակով ունեցել է իր խորհրդաբանական հիմքերը⁶⁵: Ուրարտական հայտնի կիսալուսնաձև զարդերը, ինչպես և մեդալիոնները, տարբերակելի են իրենց գեղարվեստական հարդարանքի բազմազանությամբ: Հայտնի են թե՛ պատկերագրական հարուստ սյուժետային մոտիվներով, և թե՛ պարզ խորհրդանշական պատկերներով հարդարված կախազարդեր: Ենթադրելի է, որ գեղարվեստորեն ճոխ հարդարված զարդերը կրել են արքաներն ու քրմերը, իսկ ավելի պարզ լուծումներով այլ խավերի ներկայացուցիչները⁶⁶: Սարգոն 2-րդի կողմից՝ Մուծածիրի տաճարից առևանգումների թվում կիսալուսնաձև զարդի հիշատակումը⁶⁷ ևս խոսում է հոգևոր կյանքում կախազարդերի կարևորության ու պաշտամունքային նշանակության մասին: Չի բացառվում, որ զարդերի պատկերագրությունը կարող էր պայմանավորված լինել դրանց կիրառական նշանակությամբ: Արական հանդերձում լուսանազարդի համադրություն կարելի է տեսնել Թոփրակ-կալեից հայտնաբերված արմավաճյուղը ձեռքին արական սեռի կերպարի (պալատական ծառայի⁶⁸, պալատականի⁶⁹, քրմի կամ միգուցե արքայի⁷⁰ (ենթադրվում է նաև ներքինի⁷¹)) և թևավոր մարդակերպ էակի վզամասում (սկ. 40, 41): Վանի թագավորությունում կանանց և տղամարդկանց արդուզարդում կարևոր նշանակություն են ունեցել գեղարվեստական տարբեր հարդարանք ունեցող ապարանջանները: Հնագիտական պեղումների արդյունքում հայտնաբերվել են բազմաթիվ նմուշներ՝ պարզ առանց գեղարվեստական հարդարանքի, օձ-վիշապի, առյուծի կամ խոյի գլխով հարդար-

⁶³ Kellner 1991:166.

⁶⁴ Van Loon 1966:129.

⁶⁵ Poghosyan 2025 (b):337–343.

⁶⁶ Kellner 1991:166.

⁶⁷ Дьяконов 1951 (№2):331.

⁶⁸ Barnett 1950 pl. XX.

⁶⁹ Van Loon 1966, pl. XXXIII.

⁷⁰ Çifçi 2012:41.

⁷¹ Kellner 1991:171; Պատրիկ 1983:22:

ված գտածոներ: Ենթադրվում է, որ կանայք գերադասել են օձագլուխ, իսկ տղամարդիկ վիշապագլուխ տարբերակը⁷²: Ապարանջաններ և մատանիներ կրել են վերին և ստորին վերջույթների տարբեր հատվածներում: Զարդերի և գոտիների ուսումնասիրությամբ կարելի է հանգել այն եզրակացության, որ ուրարտական ավանդույթներն իրենց ազդեցությունն են ունեցել նաև հետագա հայկական գեղարվեստական մետաղագործության զարգացման գործում⁷³: Հանդերձի և մարմնի գեղագիտական հարդարանք են ծառայել նաև տարբեր նյութերից պատրաստված ուլունքները: Ուլունքագարդերին տրվող նշանակության, ինչպես նաև աստվածուհիներին նվիրաբերելու ավանդույթի մասին է խոսում Արգիշթի (հավանաբար Արգիշթի Ա) արքայի արձանագրությամբ Ուարուբահինի աստվածուհուն ընծայված ուլունքահատիկը⁷⁴: Հին Արևելքում ուլունքներին տրվող կարևորությունն են վկայում նաև Շամիրամի ուլունքների մասին պահպանված հիշատակությունը⁷⁵, ինչպես նաև դրանց հայտնաբերումը բազմաթիվ թաղումներում⁷⁶: Զարդերի նշանակությունը կնոջ կյանքում և անդրշիրիմյան աշխարհում այնքան մեծ է եղել, որ նրանց թաղել են իրենց սիրելի զարդերով (դիակիզման դեպքում հագուստի հետ դրանք ևս այրվել են): Զարդերի հանդեպ ունեցած հատուկ վերաբերմունքն է փաստում Ինանայի վայրէջքը հանդերձյալ աշխարհ նկարագրող դրվագը միջագետքյան հայտնի առասպելում, որի համաձայն անխոցելի աստվածուհին առանց զարդերի կորցնում է իր կենսական ուժը⁷⁷: Հայկական առասպելի համաձայն էլ Շամիրամի հմայքն ու զորությունը պահպանվում են այնքան, քանի դեռ նա պարանոցին կրում է իր հռչակավոր ու մոգական հուռույթները: Ենթադրելի է, որ կանանց պատկերներով զարդերը կրել են իգական սեռի ներկայացուցիչները⁷⁸, իսկ արական սեռի կերպարներով հորինվածքները միգուցե տղամարդիկ: Հին Արևելքում զարդերը կնոջ գեղեցկությունն ու սոցիալական կարգավիճակը ընդգծելուց բացի, ունեցել են նաև անհատի հոգևոր և ֆիզիկական ուժը խորհրդանշելու, ինչպես նաև այս և հանդերձյալ աշխարհի չար ուժերից պաշտպանող հմայական նշանակություն: Զարդերը կանանց ուղեկցել են դեռևս փոքր տարիքից, որի վառ ապացույցն է հանդիսանում Նոր Արմավիրում (Հայաստան) հայտնաբերված բրոնզյա ապարանջաններով

⁷² Հմայակյան 2007:178:

⁷³ Ծահինյան 1994:43–44:

⁷⁴ Գրեկյան 2008:294:

⁷⁵ Մովսես Խորենացի 1981: 125 (Ա, ԺԸ):

⁷⁶ Հմայակյան, Հովսեփյան, Հմայակյան, Տիրացյան 2023:111; Հմայակյան, Տիրացյան, Հմայակյան 2018:177–179:

⁷⁷ Хук 1991:14.

⁷⁸ Poghosyan 2025 (a):187.

աղջկա թաղումը⁷⁹: Վանի թագավորությունում ազնվական կանանց շքեղ արդու-
զարդի փաստացի ապացույցն են հանդիսանում Չավուշթեփեում (Հայկաբերդ,
Աստվածաշեն, Վան քաղաքից հարավ-արևելք, Թուրքիա) հնագիտական պե-
դումների արդյունքում հայտնաբերված 20–25 տարեկան ազնվական կնոջ դամ-
բարանի գտածոները: Նա թաղված է եղել իր հոյակապ զարդերով (օղեր, կիսա-
թանկարժեք քարերից վզնոց, ապարանջաններ, մատանի), որոնցում բավական
հետաքրքրական է հատկապես կարգավիճակն ընդգծող ճախ մատի բրոնզե
ամուսնական մատանին: Ազնվական կանանց նմանատիպ թաղումներ հայտնա-
բերվել են նաև Վանի թագավորության այլ տարածքներից, որոնցից հատկանշա-
կան են Քայալիդերե (Մուշ, Թուրքիա) և Ալթին-թեփե (Երզնկա, Թուրքիա)
հնավայրերը: Զարդերից բացի, ուրարտական հանդերձը լրացվել է նաև բազ-
մապիսի ճարմանդներով, ֆիբուլաներով, շքասեղներով և կոճակներով: Վանի
թագավորությունում մարդկանց հանդերձյալ աշխարհ են ուղևորել իրենց հա-
գուստով և հարդարանքի տարրերով, որի վառ վկայություններն են դամբարան-
ներում հայտնաբերված գործվածքի հետքերով մետաղական շքասեղները, կո-
ճակները և այլն⁸⁰: Գործվածքի վրա մետաղական հարդարանքների գոյությունը
փաստում են որոշ ոսկե, արծաթե և բրոնզե կոճակներ (կարված են եղել գործ-
վածքի վրա) Ալթին-թեփեյի դամբարաններից մեկում հայտնաբերված տղամար-
դու հանդերձի մնացորդների վրա, ինչպես նաև մի կնոջ սարկոֆագում գտնված
հագուստի ոսկե վարդյակազարդ կոճակներն ու փայլազարդերը (пайетки,
sequins)⁸¹:

⁷⁹ Հմայակյան, Տիրացյան, Հմայակյան 2020:14:

⁸⁰ Konyar 2011:227.

⁸¹ Çavuşoğlu, Gökce, Işık 2014:26.

ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԱՀԿԱՆԱՑՈՒՆԵՐ

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՀԱԳՈՒՍՏԸ

Ուրարտական դիցապետական թագավորությունից մեզ հասած գեղարվեստական հորինվածքներն առավելապես կրում են պաշտամունքային բնույթ՝ պատկերագրական եռաչափ կամ երկչափ տիրույթում ներկայացնելով սրբազնացված կերպարների գեղարվեստական մարմնավորումները: Առանձնահատուկ ոճավորմամբ և խորհրդաբանությամբ աչքի է ընկնում գլխավոր աստվածությունների և երևակայական էակների հանդերձանքը: Արական սեռի գլխավոր աստվածություններն ընկալվել են ժամանակաշրջանին հատուկ մարդկային հատկանիշներով և առավելապես պատկերվել արքայական շքեղ հագուստով՝ այդպիսով նույնականացնելով աստված-արքայի կերպարը¹: Այս առումով ուշագրավ է այն փաստը, որ ուրարտական դիցարանի գերագույն Խալդի աստծոն² ընկալել և դիմել են «արքա» ձևով³: Աստվածությունների պատկերներում հագուստը ճոխ և հարդարուն գործվածքներից է, միզուցե ասեղնագործված⁴ և ամենայն հավանականությամբ կրկնում է արքայական հանդերձի հիմնական ձևերը: Ուրարտական հասարակությունում հագուստի հանդեպ ըստ երևույթին եղել է յուրահատուկ պաշտամունքային վերաբերմունք, որի վկայությունն է Խալդիին նվիրաբերված հագուստի վերաբերյալ հիշատակությունը⁵: Պատկերագրական հուշարձաններից դատելով՝ հագուստի հիմնական ձևն ուսային է և երկմաս, բաղկացած կարճ և երկար թևքամասերով (հաճախ թեզանիքով (сuff, манжет)) տունիկայանման զգեստ-շապիկներից (մինչ ծնկները կամ երկար՝ համապատասխան կրելու նշանակությանը), բաճկոն-վերարկուներից, տարատեսակ թիկնոցներից ու շալ-ծածկոցներից (շալերն ունեցել են տարբեր լայնք, երկարություն և հարդարանք՝ պայմանավորված այն կրողի սոցիալական դիրքով): Թևքերն ուսային հագուստի վրա ստացվել են ընդհանուր ձևվածքում՝ կողքային հատվածների միացման կարով, կարճ կամ երկար: Զգեստն ու վերնահագուստը

¹ Պողոսյան 2016:167:

² Հմայակյան 1990:33–38:

³ Дьяконов 1963:80–81 (№ 12).

⁴ Եսայան, Հմայակյան 1990:204:

⁵ Дьяконов 1951 (№2):332.

որպես ուսային հանդերձ տարբերվում են իրենց կտրվածքով և միացման դետալներով: Հանդիսավոր և ծիսական հագուստի, ինչպես նաև շալերի համար կիրառվել են տարբեր գործվածքներ և հարդարման միջոցներ: Հնագույն մշակույթներում տունիկաները եղել են ուղղանկյուն գործվածքից՝ կենտրոնում գլխի համար բացվածքով: Մարմնի վրա այն հարմարեցվել է գոտեկապով կամ շքասեղներով, ժամանակի ընթացքում աստիճանաբար ձևափոխվել է՝ որոշ հատվածներում հավելյալ կտրվածքների և կարամասերի ներդրմամբ: Թիկնոցների համար ևս կիրառվել է ամբողջական գործվածքի նույն ձևվածքը՝ վզամասի տարբեր ոճի բացվածքներով և առաջամասում դեկորատիվ զանազան հարդարումներով (հանդիպում են թե՛ ուղիղ և թե՛ կորացված կտրվածքներ): Եզրապատումն առավելապես կատարվել է ծոփազարդմամբ, թեև կիրառվել է նաև գործվածքի եզրազարդում նախազարդ երիզներով: Ինչպես հին արևելյան այլ մշակույթներում, ծոփազարդը հանդիսացել է գործվածքի և հանդերձանքի հարդարման կարևոր տարր և կիրառվել է ըստ երևույթին միայն վերնախսավի ներկայացուցիչների ճոխ հանդերձանքում (ինչպես օրինակ Ասորեստանում, որտեղ ծոփազարդը համարվել է թանկ հաճույք և հասու է եղել միայն հարուստ խավին): Բավական ուշագրավ են կլոր վզամասով և կրծքամասի ողջ երկայնքով զիգագաձև զարդանախշված կարճաթև տունիկա-շապիկները մ.թ.ա. 8-7-րդ դարերով թվագրվող ուրարտական բրոնզե որոշ կաթսաների⁶ հարդարանքում ներկայացված թևավոր կերպարների հագին: Որոշ պատկերագրական հորինվածքներ վկայում են նաև հանդերձի տարբեր տեսակների վզամասում եռանկյունաձև բացվածքի կիրառությունը: Բավական ուշագրավ է ուրարտական հոգևոր դասի հանդերձը: Թեև այն առավելապես համապատասխանում է տարածաշրջանում ժամանակաշրջանի հանդերձի հիմնական տիպերին, սակայն որոշ հնագիտական գտածոների օրինակով կարելի է առանձնացնել տարբերակիչ հատկանիշներ: Արական սեռի որոշ կերպարների հանդերձում ուշագրավ են գոտեկապով բրդե հյուսքեն շալ-կիսաշրջագետտները, որոնք զգեստի կամ շապիկի վրա հանդիսանում են լրացյալ դեկորատիվ տարր: Թոփրակ-կալեից գտնված մարդամարմին փղոսկրե գրիֆոնների զգեստն ամենայն հավանականությամբ ներկայացնում է նաև արական սեռի որոշակի սրբազան հագուստի տիպ (սկ. 42, 43): Այն կարճ թևքերով տունիկա է՝ մինչ ծնկները հասնող, թևքամասերը և վզամասը երիզված: Հանդերձում վերնագգեստի թևքամասերը ներկարված չեն եղել, այլ ստացվել են ամբողջական ձևվման արդյունքում՝ ներառված ընդհանուր կտրվածքում: Գրիֆոններից մեկի զգեստի վրայից լայն գոտեկապով ամրացված է ծոփազարդ եզրերով հարդարված, փետրավոր կամ մորթե շալ-կի-

⁶ Azarpay 1968:55.

սաշրջագգեստ: Արտաքին նկարագրից դատելով՝ այն պատրաստված է գործվածքի վրա հորիզոնական դասավորությամբ ներկարված ժայավենով մորթե դետալներից: Այն ըստ երևույթին ձևավորվել է հին շումերական կաունակեսի հիմքով, որը հայտնի է առավելապես քրմական դասի և աստվածություններ պատկերող միջագետքյան հուշարձաններից⁷ (այս առումով հետաքրքրական է, որ կիշարջագգեստ Հայկական լեռնաշխարհում կրել են վաղնջական ժամանակներից նաև կանայք, որը փաստում է Գեղամա լեռների մի ժայռապատկեր⁸): Մորթե վերնահագուստ, ինչպես նաև կիսաշրջագգեստ հայտնի է նաև էլամական աստվածությունների և վերնախավի պատկերներից⁹: Ուրարտական արական հանդերձում հաճախ են կիրառվել ուղղանկյուն ձևվածքով (միգուցե նաև այլ կտրվածքով) շալերը, որոնք ծալազարդվելով և գոտեկապվելով հանդերձի համալիրին հաղորդել են ամբողջական գեղագիտական տեսք: Լայն կիրառություն են ունեցել զարդանախշված ժայավենով երկայնական բրդե ծոփազարդ շալերը, որոնք գցվել են մի ուսին և փաթաթվել գոտկատեղի հատվածում: Թոփրակ-կալեից հայտնաբերված փղոսկրե մի արձանիկի կարճեք զգեստի վրա ակնհայտ է մեկ ուսով անցնող ուսագոտի-երիզով մորթե կամ բրդե ծոփազարդերով շալը, որն ամրացված է գոտիով (նկ. 44): Միգուցե հանդերձում դեկորատիվ հյուսվածքներով և ստացել են մորթու իմիտացիա: Միջագետքում տարբեր ծալազարդումներով շալերը մեծ տարածում են գտել դեռևս շումերական ժամանակաշրջանում¹⁰: Ծոփազարդ շալերն ընդունված էին նաև Ասորեստանում, որոնք ոճավորման արդյունքում խորհրդաբանորեն փոխարինում էին շումերական հնագույն մորթե հանդերձին¹¹: Այս առիթով կարելի է գուցահեռ անցկացնել նաև հետագայում ձևավորված հայկական ժողովրդական տարազային համալիրներում մի քանի մետր երկարություն ունեցող գործվածքի հետ, որը մարմնի վրա փաթաթվում և վերածվում էր լայն գոտու: Տաբատ (վարտիք) ըստ երևույթին կրել են զինվորները կարճ տունիկայի հետ, ինչպես օրինակ Ասորեստանում¹²: Ուսումնասիրությունները վկայում են, որ Ասորեստանում տաբատը մ.թ.ա. 7-րդ դարից դարձել է զինվորական հագուստի բաղկացուցիչ¹³: Տաբատ կարելի է տեսնել երաժիշտ կերպարների հագին Ասորեստանի Աշուրբանիպալ արքայի մ.թ.ա. 7-րդ դարի պալատական պատկերաքանդակներում, ինչպես նաև զինվո-

⁷ Boucher 1967:34.

⁸ Մարդարյան 2010:225 (նկ. 191):

⁹ Хинц 1977: 45 (фото 4, 13).

¹⁰ Boucher 1967:36.

¹¹ Кибалова, Гербенова, Ламарова 1966:47.

¹² Готгенрот 2009:49.

¹³ Kim 2010:11.

րականների տարբեր պատկերներում¹⁴: Ուրարտական արվեստում տաբատակիր կերպարի վառ օրինակ է Կարմիր բլուրից հայտնաբերված գոտու գեղարվեստական հարդարանքում ներկայացված Շիվինի արևի աստվածությունը (թեև վիճահարույց է կերպարը որպես Շիվինի դիտարկել¹⁵) (նկ. 7, 8): Տաբատի ձևը վերնամասում լայն է և ուռուցիկ, իսկ ծնկների հատվածում նեղանում է՝ միանալով թեզանիքին: Ըստ երևույթին նման տաբատ է նաև ուրարտական մի գոտու բեկորում պատկերված նետաձիգի հագին¹⁶: Արական սեռի հանդերձի մասին գունեղ պատկերացում է տալիս Էրեբունու Խալդի աստծո տաճարի (Հայաստան, Երևան) որմնանկարում ներկայացված կերպարը (նկ. 45), որն ընդունված է դիտարկել որպես Խալդի աստվածություն¹⁷: Ենթադրելի է, որ Խալդիին նվիրված տաճարում պետք է ներկայացվեր հենց նույն աստվածությունը¹⁸, սակայն չի բացառվում նաև «աստվածացված» արքայի (միգուցե հենց Արգիշթի Ա արքայի) պատկերումը (հաշվի առնելով այն, որ աստվածային խույրով և օրհնող աջով Արգիշթի արքայի արձան կանգնեցված է եղել Մուծածիրի տաճարում¹⁹): Ուրարտական կրոնական հավատալիքներում ընդգծված Խալդի-արքա փոխկապակցվածությունից է²⁰ թերևս բխում արքաների՝ աստվածներին հատուկ հատկանիշները: Հնում արքայի կերպարը հաճախ համադրվել է արեգակի հետ, և ըստ Ս. Հմայակյանի, դրանով է պայմանավորված արքայի հանդերձանքի ամենակարևոր մասի՝ թագի կամ խույրի ոսկեկուռ լինելու անհրաժեշտությունը²¹: Վանի թագավորությունում, դատելով պատկերագրական հորինվածքներից, գոյություն են ունեցել խույր-գլխարկների (tiara) տարբեր ձևեր՝ (տափակ գագաթով՝ գդակատիպ, դեպի վեր սրագագաթ բարձրացող և այլն) ճակատամասի և գագաթի տարբեր խորհրդանշական լրացումներով (նման գդակի ձևը կիրառվում է նաև ներկայիս եկեղեցական հանդերձանքում, որը վերնամասի հարդարման ձևով հիշեցնում է ուրարտական աստվածությունների խույրերը): Գեղարվեստական հորինվածքներում Խալդին տարբերակելի է առյուծի առկայությամբ՝ որպես այդ աստվածության խորհրդանշական կենդանի²² (թեև առյուծն ու ցուլը աստվածությունների որոշարկման համար ըստ Ու. Ջայդլի՝ չեն հանդիսանում անժխտելի ապացույց և չափորոշիչ²³): Աստվածությունը ներկայացված է կիսադեմ, հին

¹⁴ Boucher 1967:48.

¹⁵ Պողոսյան 2024:55:

¹⁶ Есаян 2002:96 (рис. 9).

¹⁷ Հովհաննիսյան 1973 (նկ. 46):

¹⁸ Պողոսյան 2016:167:

¹⁹ Дьяконов 1951 (№2):333.

²⁰ Հմայակյան 2007:174:

²¹ Հմայակյան 2007:174:

²² Пиотровский 1959:223.

²³ Եսայան, Հմայակյան 1980:208; Պողոսյան 2016:167:

արևելյան պատկերագրական սկզբունքների համապատասխան ¼ թեքվածությամբ, որի շնորհիվ հնարավոր է դառնում ուրվագծել հանդերձի առաջամասը: Հագուստն իրենից ներկայացնում է երկար զգեստ, վրայից կարճ և վզամասում եզրագարդված կլոր բացվածքով թիկնոց (միգուցե վզամասը ասեղնագործված է²⁴, թեև չի բացառվում ասեղնագործ երիզի կիրառումը թիկնոցի եզրային հատվածներում): Առաջամասում նկատելի են որոշակի դեկորատիվ տարրեր: Փեշամասում այն հարդարված է ըստ երևույթին հիմնական գործվածքի եզրին ներկարված գծանախշված երիզով: Վերնազգեստ-թիկնոցի եզրերը ևս հարդարված են գծավոր երիզով: Գտածոների հիման վրա տարբերակելի են օրինակ դագգահի վրա գործված զարդանախշ երիզները, որոնք կիրառվել են հագուստի եզրային հարդարանքում՝ հիմնական գործվածքի հետ վրակարման միջոցով²⁵: Հատկանշական է, որ հարևան Ասորեստանում վերնահագուստ կրում էին առավելապես վերնախավի ներկայացուցիչները, իսկ ստորին խավին այն հասու է դարձել կայսրության կործանումից հետո²⁶: Գունագեղ գործվածքները ևս իրենց թանկարժեքության պատճառով տարբեր երկրներում մինչև նոր ժամանակներ հասու են եղել միայն բարձր խավի ներկայացուցիչներին: Արևելյան սեռի հագուստի արտաքին մշակման ճոխության մասին է խոսում փղոսկրե մի քանդակի դրվագագարդերով նախշագարդված զգեստը (նկ. 46): Հնում հագուստի ձևվածքը (ինչպես նաև կրելու ձևը), գործվածքները, գունային լուծումներն ու հարդարանքը ցուցադրել են այն կրողի սոցիալական դիրքը: Որմանակարում աստվածությունը գլխին ունի կարմիր, բարձր և պինդ խույր-գլխարկ, որը ճակատամասում հարդարված է միջագետքյան աստվածային եղջրագարդ խույրերի նմանությամբ (եղջուրները խորհրդանշում են աստվածայնություն), իսկ ծոծրակային մասում թիկունքին իջնող ժապավենագարդ է (ինֆուլա) (ժապավենագարդ խույր են կրել արքաները նաև հելլենիստական Հայաստանում): Վանի թագավորությունում, ինչպես Միջագետքում, եղջրակիր գլխի հարդարանքն հանդիսացել է որպես աստվածայնության խորհրդանշիչ: Եղջրագարդ խույրն ի հայտ է եկել մ.թ.ա. 3-րդ հազարամյակում, ժամանակի ընթացքում որոշակի փոփոխությունների ենթարկվելով՝ փոխառվել Մերձավոր Արևելքի տարբեր մշակույթների կողմից²⁷: Հին արևելյան մշակույթներում կրոնական ծեսերի ժամանակ հոգևորականները ևս կրել են եղջրագարդ գլխի հարդարանք²⁸: Դատելով հանդերձի ուրվագծերից՝ այն պիրկ գրկում է մարմինը, որը հնարավոր է ստանալ միայն

²⁴ **Եսայան, Հմայակյան** 1980:204:

²⁵ **Пиотровский** 1955:69.

²⁶ **Готгенрот** 2009:42.

²⁷ **Black, Green** 2004:102.

²⁸ **Кибалова, Гербенова, Ламарова** 1966:47.

ճշգրիտ չափումներով նախագծված ձևվածքանմուշների և կարամասերի հաշվարկման արդյունքում: Հանդերձի այս համալիրն ըստ երևույթին նախատեսված է եղել տոնածիսական առիթների համար, ինչպես օրինակ Ասորեստանում, որտեղ տունիկայի վրայից վերնազգեստ-թիկնոցներ կրել են հատուկ առիթների դեպքում²⁹: Աստվածային և աշխարհիկ տղամարդու համատեղ կերպարներ են ներկայացված բրոնզե քառանկյուն մի թիթեղի հորինվածքում (նկ. 47): Գեղարվեստական հորինվածքում ցլի վրա նստեցված աստվածությանը՝ ամենայն հավանականությամբ ուրարտական դիցարանի երկրորդ գլխավոր աստված Թեյշեբային են³⁰ երկրպագում մի խումբ արական սեռի ներկայացուցիչներ: Յլի հետ ասոցացվող այս աստծո նույն կերպարն է թերևս մարմնավորված Կարմիր բլուրից գտնված բրոնզե արձանիկում (նկ.48): Արձանիկի կերպարի հագին քառանկյուն զարդամոտիվներով գործվածքից երկար, կարճ թևքերով և փեշամասում ծոփազարդ զգեստ է, խույրը գագաթամասում հարդարված է ինչպես վերոհիշյալ թիթեղի հորինվածքում: Ըստ երևույթին դա արևային սկավառակ է, թեև որոշ ուսումնասիրողներ կարծում են, որ աստվածություն խորհրդանշող աստղ է³¹: Քառանկյուն զարդամոտիվը նախնադարում արտացոլել է մարդկանց պատկերացումները երկրի ու տիեզերքի մասին: Դրա հիմքում ընկած է նաև չորսի գաղափարը, որն ունեցել է սրբազան նշանակություն՝ կապված բնության չորս տարրերի, աշխարհի չորս կողմերի, ինչպես նաև պտղաբերության հետ³²: Զգեստի գոտկամասում նկատելի է ուսով անցնող շալանման ծոփազարդ լանջագոտին: Ա. Մովսիսյանի ենթադրությամբ թիթեղի վրա, աստվածության առջև ողջույնի դիրքով կանգնած են արքայական ընտանիքի անդամներ և քուրմ³³: Առաջին անձը մյուսներից տարբերվում է աստվածային եղջրակիր, սկավառակաձև գնդով պսակված (կամ վարդյակաձև³⁴) խույրով: Չի բացառվում, որ խույրերի հարդարանքը եղել է ոսկե դետալներով: Աստվածության երկար և զարդանախշ զգեստի ձևը կրկնվում է առաջին և երկրորդ անձանց կերպարներում: Աստվածությունը զգեստի վրա կրում է բաճկոն, թևքերը հասնում են արմունկներին, եզրերում ծոփազարդ է: Իսկ նրա դիմաց կանգնած կերպարի զգեստի վրա եզրերում ծոփազարդ, վզի բացվածքը կրկնող և գոգնոց հիշեցնող դետալ է, որը գոտեկապված է թիկունքում: Հագուստի այս դետալն իր կառուցվածքով նման է քրիստոնեական եկեղեցական հագուստում կիրառվող փորուրարին: Փորուրարը

²⁹ Kim 2010:1–19.

³⁰ Պողոսյան 2024:59:

³¹ Եսայան, Հմայակյան 1980:208:

³² Մնացականյան 1955:141–160:

³³ Մովսիսյան 1998:32–33:

³⁴ Պատրիկ 1983:20 (տխ.2):

(epitrachelion) համապատասխանում է արևմտյան եկեղեցում գործածվող stol-ին և ընդհանուր է արևելյան բարձրաստիճան եկեղեցականների համար³⁵: Ըստ Վ. Հացունու դետալը հատուկ է եղել միայն ուրարտական հանդերձին³⁶: Սա թերևս վկայում է, որ տվյալ կերպարը, ամենայն հավանականությամբ աստվածային հատկանիշներով օժիված և սրբազան հոգևորականի հագուստով արքան՝ աստվածության առջև ներկայացված է կրոնական ծիսակարգ իրականացնելիս: Տարբեր հին մշակույթներում աստվածացված արքան կատարել է նաև քրմի գործառույթներ³⁷: Կերպարի աջ կողմում նկատվում է գոտուց կախված թուրը: Հաջորդ տղամարդու հագին զգեստի վրայից երկար պարեգոտ է, իսկ գլխին կրում է եզրակ-տրեգով թասակ, որի ձևը հիշեցնում է հայկական ավանդական արախչիի տիպը: Երրորդ կերպարը ևս գլխին ունի նման թասակաձև գլխարկ: Հագին փեշամասում ծոփազարդ երկար զգեստ է՝ վրայից պարզ գործվածքից վերնազգեստ, որը ստորին մասում ունի դեկորատիվ կտրվածքներ: Թասակաձև գլխարկներ կրել են նաև աղջիկները՝ դատելով ուրարտական բրոնզե որոշ գոտիների պատկերադաշտերից: Հորինվածքում երկրապագության դիրքով կա նաև հասակով տարբերվող մի փոքրիկ կերպար, ըստ երևույթին մանուկ, որի հագուստը, ինչպես հնում ընդունված էր, չի տարբերվում սեռատիպային հատկանիշներով մեծերի հագուստի հիմնական ձևերից: Արտաքին և ներքին զգեստները քառանկյուն զարդանախշերով հարդարված գործվածքից են, եզրամասերում առկա է ծոփազարդ: Ցլին կանգնեցված աստվածության մեկ այլ կերպարում զգեստը դարձյալ նույն գործվածքից է, որտեղ առավել ակնհայտ են քառանկյան մեջ ամփոփված վարդյականախշերը (նկ. 49): Զգեստի ստորին մասը հարդարված է վրակարված վարդյականախշ երիզից իջնող խիտ ծոփազարդով: Արձանիկի վերին մասը կորսված է, սակայն գոտկատեղի հատվածում նկատելի է ծոփազարդ շալը, որն ըստ երևույթին աստվածային հանդերձի կարևոր և սրբազան տարր է եղել: Նույնօրինակ հանդերձով է նաև Թոփրակ-կալեի Խալդի աստծո տաճարի պեղումներում գտնված եղջրավոր առյուծին կանգնեցված աստվածությունը³⁸ (նկ. 50): Ուրարտական հագուստում մեծ տարածում գտած քառանկյան մեջ ամփոփված վարդյակի պատկերամոտիվը կարող էր ստացված լինել թե՛ գործվածքի գունազարդման արդյունքում (դաջածո), և թե՛ ասեղնագործությամբ³⁹: Չի բացառվում, որ վերնախավի հագուստում զարդանախշերը, ինչ-

³⁵ Խաչմանյան 2024:173–175:

³⁶ Հացունի 1923:25:

³⁷ Փրօքեր 1983:17–18.

³⁸ Van Loon 1966:91.

³⁹ Պողոսյան 2017:88; Поросян 2024:184–185.

պես Միջագետքում⁴⁰, հարդարվել են ապլիկացիայի ձևով (մետաղաթել): Ասորեստանում և Բաբելոնում նմանօրինակ զարդաձևերն ըստ Լ. Օպենհեյմի՝ կատարված են եղել ծիսական հագուստի վրա ոսկեգործ ապլիկացիոն սկզբունքով⁴¹: Այս առիթով ուշագրավ է Սարգոն 2-րդ արքայի՝ Աշշուրին ուղղված վերոհիշյալ տեքստում Խալդի աստծո ոսկյա սկավառակներով և վարդյակներով զարդարված հագուստի վերաբերյալ պահպանված հիշատակությունը⁴² (այս առիթով թերևս տեղին կլինի գուգահեռ տանել նաև հայկական միջնադարյան արքայական և եկեղեցական ոսկեգործ հագուստի հետ): Ենթադրվում է, որ Վանի թագավորությունում եղել են նաև ապլիկացիայի մասնագետներ⁴³: Գործվածքի հարդարման այս ավանդույթը շարունակվել է նաև միջնադարյան Հայաստանում, որը փաստում են Ն. Մառի կողմից Անիի պեղումներում հայտնաբերված ոսկեթել շղթայակար ասեղնագործությամբ գործվածքի պատառիկները: Աստվածային զգեստը, նկարագրությունից դատելով, կատարված է եղել ժանյակագարդ (open work, ажурный) մանրարուրք տիպի մշակմամբ: Վերոհիշյալ տեքստում խոսվում է նաև ոսկե աստղերով զարդարված կաշվե յոթ գույգ կոշիկների մասին: Ուրարտական արական սեռի կոշիկների ձևի մասին վառ պատկերացում կարելի է կազմել Կարմիր բլուրի կոշկաձև գավաթների միջոցով⁴⁴: Դրանց արտաքին հարդարանքում բավական ճշգրիտ տրված են կոշիկի ձևվածքն ու դետալները (նկ. 51): Նման կոշիկներ են կրում նաև Լոռի Բերդի (Հայաստան) դամբարաններից մեկում գտնված արծաթե գավաթի զարդագոտու աշխարհիկ տեսարանում պատկերված հեծյալները: Գեղարվեստական հորինվածքն իր պատկերագրական հատկանիշներով համապատասխանում է ուրարտական ժամանակաշրջանին⁴⁵: Չի բացառվում նաև սանդալատիպ կոշիկների գործածությունը: Թեյշեբա աստվածության կերպավորումը լավագույնս արտացոլված է նաև Արծքեի (Ադիլջևազ, Թուրքիա) պատկերաքանդակում (նկ. 52): Ցլին կանգնած աստվածությունը ներկայացված է ավանդական կիսադեմ $\frac{3}{4}$ թեքվածությամբ, կենաց ծառի առջև ակնհայտ ծիսական արարարողակարգում և համապատասխանաբար տոնածիսական հանդերձով: Գլխին կրում է եղջրագարդ, ութագագաթ արևային սկավառակով պսակված⁴⁶ խույր՝ հարդարված չորս վարդյակագարդ հորիզոնական գոտիներով: Պտղաբերության և արևային գաղափարները խորհրդանշող ծաղկային և վարսանդապտղային զարդաձևերը հետագայում

⁴⁰ Rubin 1976:13.

⁴¹ Openheim 1949:172.

⁴² Frame 2021:304.

⁴³ Çavuşoğlu, Gökce, Işık 2014:26.

⁴⁴ Пигровский 1962 (рис. 28, 29).

⁴⁵ Գևեջյան 2007:148–149:

⁴⁶ Van Loon 1966:74.

իրենց տեղն են գտել նաև հայոց արքաների գլխի հարդարանքներում⁴⁷: Աստվածության վերնագգեստը և զգեստը վարդյակազարդ են, իսկ եզրամասերում տարբերվում զարդանախշ երիզով (кайма, trim): Արծքեից հայտնի է նաև առյուծին կանգնած թևավոր Խալդիի պատկերաքանդակ (սկ. 53): Հանդերձը կարճ, թեզանիքով թևքերով, փեշամասում ծոփազարդ երկար վերարկու է, տակից մինչև ծնկները հասնող կարճ, ծոփազարդ զգեստ: Վերնագգեստի վրա, ուսով անցնում է զարդանախշ եզրազարդով շալը՝ փաթաթվելով գոտկամասում: Աստվածության գլխի հարդարանքը կրկնում է Թեյշեբայի եղջրազարդ խույրի ձևը: Հորինվածքից դատելով՝ աստվածությունը ներկայացված է ծիսական գործողության մեջ, և հետևաբար կարելի է ենթադրել, որ տվյալ հագուստի տիպը կիրառվել է ծիսատոնական առիթների համար: Գեղարվեստական հորինվածքներում վերնահագուստի պատկերման ուրվագծերից դատելով՝ դրանք կարված են հաստ, իսկ տակի զգեստը միգուցե ավելի նուրբ գործվածքներից: Աստվածությունների ծոփազարդ կարճթևք զգեստն ու վերնահագուստը բազմիցս կրկնվում են նաև այլ կերպարային լուծումներում: Սկավառակաձև մի թիթեղի հորինվածքում պատվանդանին կանգնած եղջրազարդ խույրով աստվածության հագին երկար, փեշամասում ծոփազարդ զգեստ է, որն առաջամասում մի կողմից ունի ծոփազարդ կորացող փեղկ (սկ. 54): Զգեստի վրայից կրում է ծոփազարդ եզրերով և կորածն կտրվածքով թիկնոց: Նմանօրինակ հագուստով են նաև գլխավոր կերպարի աջ ու ձախ անկյուններում պատկերված եղջրազարդ խույրով սրբությունները: Մեկ այլ տիպի թիկնոցի օրինակ կարելի է տեսնել բրոնզե մի թիթեղի վրա ցլին կանգնած դիմահայաց Թեյշեբայի հագին (սկ. 55): Կորածն եզրերով ծոփազարդ թիկնոցներ հայտնի են նաև այլ հորինվածքներից (սկ. 56, 57): Արական սեռի զգեստի մասին եռաչափ պատկերացում կազմելու համար կարելի է դիտարկել նաև Վանից գտնված բրոնզե արձանիկը (սկ. 58): Եղջրազարդ գլխի հարդարանքից դատելով աստվածություն է, որի հագին կարճ թևքերով, գոտկամասում լայն գոտեկապով նստեցված և փեշամասում թեթևակի լայնացող պարզ զգեստ է:

Աստվածությունների տարբեր կերպարներում զգեստի գործվածքները տարբերակվում են զարդանախշմամբ: Օրինակ Սերբար-թեփեից (Գիլիմլի, Թուրքիա) հայտնաբերված բրոնզե մի թիթեղի հորինվածքում աստվածությունը՝ ամենայն հավանականությամբ Խալդին, պատկերված է կարճաթևք, առաջամասում կորացված ծոփազարդ եզրերով բաճկոնով, տակից կրում է երկար շեղ գծազարդերով գործվածքից զգեստ: Փեշամասում հիմնական գործվածքին ավել-

⁴⁷ Մնացականյան 1955:45–46:

լացված է եղևնանախշ երիզ (միգուցե ասեղնագործված⁴⁸) (սկ. 59): Այստեղ աստվածային կերպարը հանդես է գալիս երիտասարդ կերպավորմամբ: Այս առումով հատկանշական է նաև այն, որ տարբեր հորինվածքներում աստվածությունները ներկայացված են մորուքով կամ առանց, երիտասարդ կամ ծերունու արտաքինով: Ֆ. Քյոնիգի կարծիքով Խալդի աստվածությունը ընկալվել է որպես պատանի, հասուն կամ ծերունի⁴⁹: Ամենայն հավանականությամբ որոշակի տարբերակում է եղել նաև հանդերձի ձևերում և դետալներում: Աստվածային հանդերձի հիմնական ձևվածքը ուրարտական արվեստում կրկնվում է նաև սրբազան գործողություններ իրականացնող կերպարների արտաքին նկարագրում: Ալթին-թեփեյից, Գարիբին-թեփեյից (Վան, Թուրքիա, նորահայտ որմնանկարներ) և Էրեբունուց գտնված որմնանկարների բեկորների օրինակով կարելի է փաստել, որ սրբազան հագուստում նախընտրելի գույներից են եղել կարմիրը, սպիտակը և կապույտը (սկ. 60–62): Ալթին-թեփեյի որմնաբեկորներից մեկում եղջրակիր խույրով կերպարների հանդերձում կիրառված են կարմիր և սպիտակ գունային հակադրություններ, մարմնի համար ևս ընտրված է սպիտակը⁵⁰: Կարմիր և սպիտակ հանդերձ խեթական մշակույթում ևս կրում էին ծիսակատարություն իրականացնող քրմերը որպես «մաքրագործված» հագուստ: Խեթական մի տեքստում խոսվում է ծիսական արարողակարգում կարմիր գույնի քրմական հանդերձի, ինչպես նաև սպիտակ ու կարմիր գույների խորհրդանշական իմաստի մասին⁵¹: Ալթին-թեփեյի որմնանկարում կրկնվող կերպարները երկար զգեստով են, որն արմունկի հատվածներում բաց գույնի միագույն պարզ գործվածքից թեզանիք ունի, իսկ փեշամասում ըստ երևույթին ներկարված գծավոր երիզ: Գոտկատեղն ընդգծված է եզրերում ծոփազարդ ծածկոցով, որն անցնում է մի ուսով և փաթաթվում գոտկամասում, հավանաբար ամրացվելով նաև ֆիբուլաշքասեղներով:

Արական սեռի հանդերձանքում իր ուրույն տեղն ունեն նաև զինվորական հանդերձանքի ձևերը: Սաղավարտների և սպառազենի այլ նմուշների գեղարվեստական հարդարանքում ներկայացված ռազմական տեսարանները բացահայտում են տվյալ ժամանակաշրջանի զինվորական հանդերձի հիմնական տիպերը: Ուրարտական զորքի հանդերձավորման հնագույն օրինակները ներկայացված են Բալավաթյան դարպասների պատկերազարդումներում: Մ.թ.ա. 9-րդ դարում Արամե արքայի զինվորները կրել են կարճաթև, մինչև ծնկները հասնող գոտեկապված շապիկ-զգեստ և կատարազարդ սաղավարտներ (*шлем с*

⁴⁸ Եսայան, Հմայակյան 1990:204:

⁴⁹ Հմայակյան 1982:131:

⁵⁰ Van Loon 1966:67–68.

⁵¹ Ардзинба 1982:56.

гребнем, crested helmet): Զինվորական հանդերձի հիմնական ձևերը, դատելով ռազմական բնույթի գեղարվեստական հորինվածքներից, էական փոփոխություն չեն կրել նաև հետագա դարերում: Զինվորական հանդերձում զինվորների հագին առավելապես մինչև ծնկները հասնող տունիկա-զգեստ է գոտեկապով, հիմնականում սրագագաթ սաղավարտ (հանդիպում են նաև ականջակալերով սաղավարտներ) և երկարաճիտ կոշիկներ (նկ. 63–65): Զգեստի վրայից կրել են զրահաբաճկոն, որի մանր դետալները կարվել կամ ամրացվել են գործվածքի կամ կաշվի վրա⁵²: Կարմիր բլուրում հայտնաբերվել են ուրարտական զրահաբաճկոնի նմուշներ, նման ասուրական օրինակներին⁵³: Զինվորականների որոշ պատկերներում նկատելի են երկարաճիտ կոշիկների Z-անման ամրակները⁵⁴: Վանի թագավորության սպառազենի ասպարեզում բավական մեծ գիտական հետաքրքրություն է ներկայացնում բրոնզե սաղավարտների գեղարվեստական բազմաթիվ հարդարանքը, որը հավանաբար պայմանավորված է սաղավարտի կիրառական նշանակությամբ: Մետաղական սաղավարտներ հայտնաբերվել են Վանի թագավորության տարբեր շրջաններից: Դատելով կերպարվեստի տարբեր նմուշների վրա պահպանված պատկերներից՝ Հայկական լեռնաշխարհում սաղավարտները կիրառվել են արդեն մ.թ.ա. 2-րդ հազարամյակում: Մեր օրեր հասած ուրարտական բրոնզե սաղավարտները տարբերվում են իրենց ձևերով և գեղարվեստական հարդարամբ⁵⁵: Մեծ տարածում են գտել հատկապես սրագագաթ սաղավարտները: Պահպանված օրինակների գեղագիտական տեսքից և պատկերագրական առանձնահատկություններից դատելով՝ դրանք ամենայն հավանականությամբ ժամանակին ունեցել են տարբեր խորհրդաբանական և գործածական նշանակություն: Վանի թագավորության ժամանակաշրջանին վերագրվող սաղավարտների ձևերի և կիրառության վերաբերյալ առաջնային տեղեկություն են հաղորդում Բրիտանական թանգարանում գտնվող Բալավաթյան դարպասների գեղարվեստական հարդարանքում՝ Արամե արքայի զորքի զինվորների սաղավարտներն ու Ասորեստանի Սալմանասար 3-րդ արքայի այդ դարպասների վրա թողած արձանագրությունը: Հին արևելյան կանտոններով կատարված կիսադեմ պատկերները միայն հաղորդում են արտաքին ուրվագիծը և դժվար է դրանց գեղարվեստական հարդարանքի մասին դատողություն կատարել: Ուրարտական սաղավարտներ հիմնականում հայտնաբերվել են երկու տիպի հնավայրերից՝ տաճարական պաշտամունքային և պալատական համալիրներ-

⁵² Есаян 1962:202.

⁵³ Пиотровский 1959:167.

⁵⁴ Вергазов 2023:14–18.

⁵⁵ Есаян 1986.

րի զինապահոցներից⁵⁶: Ուրարտական սաղավարտներ հայտնաբերվել են Կարմիր բլուր, Ալթին-թեփե, Չավուշ-թեփե (Թուրքիա) և այլ հնավայրերից, ինչպես նաև կան բազմաթիվ սաղավարտներ, որոնց հայտնաբերման վայրն անհայտ է: Դա թերևս դժվարեցնում է ամբողջացնել գեղարվեստական զարգացման պարբերացումը ըստ ժամանակագրական և տեղագրական հատկանիշների: Չավուշ-թեփեից և Ուշ-կալեից (Թուրքիա) հայտնաբերված սաղավարտները ենթադրվում է, որ պատերազմում զոհված զինվորների են պատկանել⁵⁷: Առավել հայտնի նմուշների համեմատական քննությունը թույլ է տալիս որոշակի պատկերացում կազմել մ.թ.ա. 9–6-րդ դարերի ուրարտական սաղավարտների հիմնական ձևի և հարդարման առանձնահատկությունների վերաբերյալ: Ենթադրաբար մեծ թիվ են կազմում նաև տարբեր դարերում գանձագողության հետևանքով կորսված և տարբեր հնավաճառների մոտ հայտնված սաղավարտները: Գանձագողության արդյունքում են կորսվել նաև Սարգոն 2-րդի ռազմարշավի արդյունքում՝ Մուծաժիրի Խալդի աստծո տաճարից առևանգված գանձերի թվում հիշատակվող սաղավարտները⁵⁸: Արձանագրությունների շնորհիվ պարզ է դառնում, որ սովորական սպառազեն լինելուց բացի, սաղավարտները հանդիսացել են նաև պաշտամունքային առարկա, նվիրաբերվել են տաճարներին և աստվածներին⁵⁹: Դա են փաստում օրինակ Ալթին-թեփե հնավայրի տաճարային հատվածում, պաշտամունքային առարկաների թվում հայտնաբերված սաղավարտները⁶⁰: Որոշ սաղավարտների ճակատամասի պաշտամունքային պատկերագրությունը վկայում է, որ նման հարդարանքով սաղավարտները կրել են հատուկ ծեսերի ժամանակ: Դա է վկայում բարձրաքանդակային մի հորինվածքում ծիսական շքերթի մասնակցող կերպարի սաղավարտը⁶¹: Պաշտամունքային իրերը պահվել են ոչ միայն տաճարներում, այլև միգուցե պալատական համալիրների սրբազան հատվածներում⁶²: Հին Մերձավոր Արևելքից հայտնի սաղավարտների կեսից ավելին հենց ուրարտական սաղավարտներն են⁶³: Օ. Բելլիի ենթադրությամբ Արգիշթի Ա արքայի գահակալման տարիներին (մ.թ.ա. 786–764 թթ.) ոճափոխություն է տեղի ունեցել սաղավարտների գեղարվեստական հարդարանքում և երկրաչափական զարդամոտիվները փոխարինվել են ֆիգուրատիվ

⁵⁶ Dezsö, Niederreiter, Bodnár 2021:128.

⁵⁷ Dezsö, Niederreiter, Bodnár 2021:128.

⁵⁸ Thureau-Dangin 1912:368–385.

⁵⁹ Պողոսյան 2024:81:

⁶⁰ Özgüç 1966.

⁶¹ Seidl, Calmeyer, Merhav 1991:124.

⁶² Dezsö, Niederreiter, Bodnár 2021:17.

⁶³ Dezsö 2001:203.

պատկերներով⁶⁴: Վանի թագավորության գեղարվեստական մետաղագործության մեջ յուրօրինակ տեղ են զբաղեցնում հատկապես ծիսական սյուժեներով հարդարված սաղավարտները: Հատկապես ակնառու են ռազմական շքերթի, որսի ու ծիսական արարողության թեմատիկ հորինվածքային լուծումները սաղավարտների հարդարանքում: Այդօրինակ սաղավարտների շարքում կարևորվում է Կարմիր բլուրում 1947 թվականին հայտնաբերված Սարդուրի Բ արքայի արձանագրությամբ բրոնզե սաղավարտը: Սաղավարտի ստորին հատվածում Արգիշթի Ա արքայի որդի Սարդուրի Բ-ի սաղավարտը Խալդի աստծոն ձոնելու վերաբերյալ սեպագիր հիշատակությունն է⁶⁵: 1950 թվականի պեղումների արդյունքում գտնվել է բրոնզե սաղավարտ Մենուայի որդի Արգիշթի Ա արքայի սեպագիր արձանագրությամբ, որն իր գեղարվեստական հարդարանքով համընկնում է առաջին օրինակի հետ⁶⁶: Սաղավարտներին միավորում է հարդարման միևնույն տիպը (նկ. 66, 67): Գեղարվեստական տեսակետից բավական ուշագրավ են Վանի թագավորության տարբեր շրջաններից հայտնաբերված այսպես կոչված Թեյշեբայի կայծակնային խորհրդանշանով բրոնզե սաղավարտները: Թեյշեբայի խորհրդապատկեր պարունակող սաղավարտներն ըստ իրենց գեղարվեստական հարդարման ձևի բաժանվում են երկու տիպի՝ Թեյշեբայի խորհրդապատկերով և Թեյշեբայի խորհրդապատկերին ռելիեֆային ուղղահայացով միացող կոնաձև սաղավարտներ (նկ. 68): Սաղավարտի ճակատամասի կենտրոնական հատվածում յուրօրինակ ռելիեֆային մշակմամբ գրաֆիկական պատկեր է (ըստ Ա. Պատրիկի՝ եռաժանի⁶⁷), որը Բ. Պիտրովսկու ենթադրությամբ հանդիսանում է Թեյշեբա աստվածության խորհրդանշանը⁶⁸: Այս առիթով թերևս կասկածելի է թվում Խալդի աստվածությանն ուղղված տեքստով սաղավարտների պատկերանշանը վերագրել Թեյշեբային⁶⁹: Որոշ ուսումնասիրողներ խորհրդանշանը համարում են Խալդիի եռաժանի⁷⁰ կամ կենդանական եղջյուրներ⁷¹: Չի բացառվում, որ այսօրինակ սաղավարտները կրել են հատուկ գործերի զինվորները: Դատելով Մհերի դռան արձանագրությունից՝ դիցարանի գլխավոր աստվածություններն ունեցել են «գործեր», որոնց մատուցվել են գոհաբերություններ⁷²: Պ. Կալմեյերի ենթադրությամբ սաղավարտների ճակատամասի այս

⁶⁴ Belli 1993:61–67.

⁶⁵ Пиотровский 1950:67.

⁶⁶ Пиотровский 1952:39.

⁶⁷ Պատրիկ 1983:20 (տխ. 2):

⁶⁸ Пиотровский 1950:59 (рис. 38).

⁶⁹ Погосян 2023:221–228.

⁷⁰ Riemschneider 1965:78–79.

⁷¹ Van Loon 1966:119.

⁷² Հմայակյան 1990:29:

խորհրդապատկերն իրենից ներկայացնում է արքայական պատկանելության նշան⁷³: Աստվածությունների զինավառ հանդերձանքի ուշագրավ պատկերներ են ներկայացված Վերին Անձավից (Թուրքիա) հայտնաբերված բրոնզե վահանի շրջանաձև հորինվածքում: Սաղավարտով են ներկայացված նաև վահանի աղեղնավոր հերոսները (նկ. 69, 70): Զինվորական հանդերձում կարևոր տեղ են ունեցել նաև մետաղական կապարճները, որոնք գցվել են ուսին և հարդարվել են հիմնականում ռազմական թեմատիկ պատկերագրությամբ: Կարմիր բլուրից հայտնաբերված փայտե արձանիկների վրա գոտուց են կախված նաև դաշույնի համար նախատեսված պատյանները (նկ. 71): Ուրարտական զինվորական հանդերձավորման մասին կարելի է պատկերացում կազմել նաև զինավառ աստվածությունների, հատկապես Խալդիի կերպարային լուծումներով⁷⁴: Ելնելով սեպագիր արձանագրություններից, Խալդիին մարդկային պատկերացումներում ունեցել է զինվորի կերպարանք, պատերազմներում հանդես եկել որպես զորքի առաջնորդ:

Ուրարտական մշակույթում որսորդի կերպար հայտնի է Էրեբունի պալատական համալիրից հայտնաբերված մի որմնանկարի բեկորի օրինակով: Կերպարի հագին կարճաթև կապույտ զգեստ է, գլխին՝ փափուկ գործվածքից, օղագոտուն (օբոդոկ, ободок) ուսերին իջնող ծոծրակալով և ականջակալերով գլխարկ (шапка-ушанка, flap hat) (նկ. 72): Եղանակային պայմաններից ելնելով, Վանի թագավորությունում, ինչպես Ասորեստանում⁷⁵, որսորդական և զինվորական հագուստում միգուցե կիրառվել են նաև մորթի և կաշի: Դժվար է ասել արդո՞ք պատկերված է սովորական որսորդ-արքայի, թե՞ սրբազնացված կերպարի հանդերձ, քանի որ Առաջավոր Ասիայի կերպարվեստում մեծ տարածում գտած որսի մոտիվը ոչ միայն եղել է արքայական զվարճանք, այլև արքայական ծիսակատարությունների անբաժան մաս⁷⁶: Որսորդ-հերոսի կերպար կարելի է համարել նաև բրոնզե որոշ գոտիների հարդարանքում, առյուծի որսի տեսարաններում ներկայացված զինյալ հեծյալներին, որոնք հիմնականում կրում են զինվորական հանդերձին հատուկ մինչ ծնկները հասնող զգեստ (նկ. 9, 10): Ուրարտական մի գոտու դրվագում նիզակակիր որսորդի հագին եռանկյուն վզամասով, կարճ թևքերով, լայն գոտեկապով գծազարդ զգեստ է, գլխին կրում է դարձյալ փափուկ գլխարկ: Պաշտամունքային մի թիթեղից էլ հայտնի է աղեղնավորի կերպար՝ ավանդական տիպի երկար զգեստով և սաղավարտով (նկ. 73): Էրեբունու որմնանկարներում պահպանվել է նաև հովիվի պատկեր, հագին երկար, սպի-

⁷³ Calmeyer 1991:316.

⁷⁴ Պողոսյան 2018:

⁷⁵ Houston, Hornblower 1920:46.

⁷⁶ Кинжалов 2009:26.

տակ զգեստ՝ համադրված կապույտ թիկնոցով, գլխին երկար ժապավեն-գլխակապ (նկ. 74): Որմնանկարի բեկորներից մեկում պահպանվել է նաև ցլերին ուղեկցող մեկ այլ հովիվի կամ տաճարային սպասավորի մարմնի հատված⁷⁷ կարճ տունիկայով և գոտեկապից իջնող ծոփազարդ միակողմանի շալով:

Արական սեռի հանդերձի ուսումնասիրության շրջանակում նաև բավական հետաքրքրական է դիտարկել Կարմիր բլուրից հայտնաբերված կավե ձկնակերպ արձանիկների հանդերձանքը: Փոքրիկ կավե արձանիկները ներկայացնում են մորուքավոր էակներ, որոնց գլուխն ու մարմինը հարդարված է ելուստավոր, ձկնագլուխ գլխանոց-ծածկոցով (նկ. 75): Ձկնաթեփուկային հանդերձանքի վրա պահպանվել են կապույտ գունավորման հետքերը՝ հավանաբար խորհրդանշելով նրանց ծովային բնույթը⁷⁸: Ձկնակերպ աստվածությունների պատկերագրական նախատիպը հանդիպում է օրինակ քասսիթական ժամանակաշրջանի արվեստում, որը մեծ տարածում է գտել նաև հետագա նոր-ասուրական և նոր-բաբելոնյան մշակույթներում⁷⁹: Ձկնակերպ մորուքավոր արարածների կավե նմանօրինակ քանդակներ հայտնաբերվել են նաև Աշուր և Նինվե քաղաքների (Իրաք) կառույցների ստորգետնյա հատվածներում⁸⁰: Ձկնակերպ արարածներն ամենայն հավանականությամբ ունեցել են ծիսապաշտամունքային կարևոր նշանակություն⁸¹ և չի բացառվում, որ իրականում այս կերպարների նախատիպերը եղել են նմանօրինակ ձկնատիպ հանդերձով, որոշակի ծես իրականացնող քուրմ-շամաններ (ուրարտական մի կնիքի դրոշմվածքում կա նմանակերպ քրմի կամ աստվածության պատկեր⁸²): Ասուրական պատկերաքանդակների հետ համեմատելիս կարելի է ենթադրել, որ գլխի եղջրավոր հարդարանքը վերնամասում հարդարվել է ձկան գլխի ձևով, որից թիկունքի վրա իջել է ձկան մարմնի ուրվագծով թիկնոցը: Հետաքրքրական է, որ նման կերպավորումն իր ձևաբանական ընդհանրական հատկանիշներով հիշեցնում է քրիստոնեական վեղարով հոգևորական սրբազան հանդերձանքի ընդհանուր ուրվագիծը:

⁷⁷ Ходжаш, Трухтанова, Оганесян 1979 (рис. 53).

⁷⁸ Պողոսյան 2018:237.

⁷⁹ Black, Green 1992:82.

⁸⁰ Green 1983:87.

⁸¹ Тараян 2012:113–124; Պողոսյան 2024:62:

⁸² Пиотровский 1952:24.

ԿԱՆԱՆՑ ՀԱԳՈՒՍՏԸ

Վանի թագավորության մշակույթի հետազոտության բնագավառում դեռևս պատշաճ ուսումնասիրության չեն ենթարկվել հայտնաբերված գտածոների հորինվածքային բովանդակության իրական խորհրդաբանությունը, դրանցում ներկայացված կանանց կերպարների տարբերությունները, սոցիալական կարգավիճակի առանձնահատկությունները, մասնագիտական կողմնորոշումները, հասարակության մեջ նրանց հանդեպ ձևավորված վերաբերմունքը և իհարկե հանդերձի առանձնահատկությունները: Սույն ուսումնասիրության համար հին Մերձավոր Արևելքի մշակութային առնչությունների համատեքստում կնոջ կերպարը լուսաբանելու հարցում հիմնական սկզբնաղբյուր են ծառայել Վանի թագավորության և հարևան մշակույթների հնագիտական գտածոները, ինչպես նաև պահպանված գրավոր աղբյուրներում արձանագրված հիշատակությունները: Գեղարվեստական հորինվածքների վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ դրանցում ներկայացված կանանց ինքնության բացահայտման գործում կարևոր նշանակություն ունեն պատկերամիջոցների ընտրությունը, հորինվածքային լրացյալ տարրերը և հանդերձի առանձնահատկությունները՝ որպես սոցիալական և կրոնական կարգավիճակի գլխավոր ցուցիչներ: Գրավոր սակավաթիվ աղբյուրներում պահպանվել են կանանց մասին հիշատակումներ, որտեղ կանանց հատկանշող անվանումներում կիրառվել է «MUNUS» շումերական գաղափարագիրը¹: Բացի դա, հանդիպում են նաև «úedia» և «lutú» բառաձևերը, և հետաքրքրական է, որ որոշ ուսումնասիրությունների համաձայն «úedia» ձևը հիշատակված է ցածր խավի կանանց (սպասուհիներ, օղալիսկներ և այլն) նկարագրություններում²: Արձանագրություններում հանդիպում է նաև «sila» ձևը, որը Ֆ.Քյոնիգի վերծանությամբ կիրառվել է կին, մայր կամ քույր նշանակությամբ³: Մի սեպագիր արձանագրության մեջ «sila» բառը նշվում է Խալդիի կնոջը զոհաբերություն մատուցելու համատեքստում, ուստի հաստատվում է բառի կին թարգմանությունը⁴: Հավանական է, որ այն ուղղակի հատկանշել է իգական սեռը⁵: Բացի վերը նշվածը, արձանագրություններից հայտնի է նաև «gašan»բառը,

¹ Çavuşoglu, Işık, Gökce 2014:236.

² Çavuşoglu, Işık, Gökce 2014:236–237.

³ König 1955–57:199.

⁴ Çavuşoglu, Işık, Gökce 2014: 238.

⁵ Այվազյան 2013:102:

որը հետազոտողները թարգմանել են որպես տիկին: Ազնվական կանանց վերաբերյալ շատ քիչ են պահպանված գրավոր աղբյուրները: Ուրարտական միայն երեք սկզբնաղբյուրում է պահպանվել թագուհիների վերաբերյալ հիշատակություն⁶: Հիշարժան է Մենուա արքայի կնոջ՝ (կամ դստեր⁷) Թարիթիայի վերաբերյալ արձանագրությունը Մենուայի քարակերտ սեպագրում, որից տեղեկանում ենք Մենուայի կառուցած հայտնի ջրանցքի տարածքում (Վան) կնոջը նվիրված խաղողի այգու մասին⁸: Սա թերևս կարևոր տեղեկություն է առ այն, որ Վանի թագավորությունում թագուհիներն ունեցել են անձնական ունեցվածք: Այանիսի ամրոցի պեղումներում բացված ոսկե առարկայի արձանագրությունից տեղեկանում ենք հավանաբար Ռուսա Բ-ի կնոջ՝ Քաքուլիի ունեցվածքի մասին⁹: Ուրարտական արքայական արձանագրություններում միայն մեկ կնոջ հիշատակումը վկայում է, որ արքաները եղել են մոնոգամ, թեև կան նաև հիշատակություններ հարեմների գոյության մասին¹⁰: Տեղեկություններ են պահպանվել նաև հարևան թագավորությունների միջև արքայադստրերին կնության տալու վերաբերյալ¹¹: Այսօրինակ միջմշակութային երևույթները թերևս կարող էին նպաստել հանդերձում առկա նորաձևության նմանություններին ու փոխազդեցություններին: Գրավոր աղբյուրներից բացի, հնագիտական պեղումների արդյունքում հայտնաբերվել են արքունական կանանց թաղումներ (Գիրիթթեփե¹², Քայալիդերե¹³, Ալթինթեփե¹⁴ (Թուրքիա) և այլն), բացահայտելով ոսկե, արծաթե, բրոնզե զարդեր, ոսկե ծաղկանման կոճակներ (Ալթին-թեփե հնավայրի թաղումների հատվածում մարմինների մոտ հայտնաբերվել են ոսկե սկավառակաձև առարկաներ, որոնք հավանաբար կարված են եղել հագուստին¹⁵): Այանիսի պեղումներով հայտնաբերված ունքի ակցանը, աչքի գծաներկի և ականջի մաքրման միջոցները վկայում են Վանի թագավորությունում մարմնի խնամքի և գեղեցկության հանդեպ տածած ուշադրությունը¹⁶: Հին Արևելքում դեմքի խնամքն ընդունված է եղել թե՛ կանանց և թե՛ տղամարդկանց համար¹⁷: Այս ամենի հետ մեկտեղ բավական ուշագրավ է, որ կանայք դերակատարում են ունեցել նաև ռազմական գործում¹⁸:

⁶ Հմայակյան, Հովսեփյան, Հմայակյան, Տիրացյան 2023:103:

⁷ Дьяконов 1963:57–62.

⁸ Çavuşoglu, Işık, Gökce 2014:239.

⁹ Çavuşoglu, Işık, Gökce 2014:239–240.

¹⁰ Çavuşoglu, Işık, Gökce 2014:240.

¹¹ Պրեկյան 2008:301:

¹² Balkan 1964:241.

¹³ Burney 1966:110.

¹⁴ Özgüç 1969:15–22.

¹⁵ Azarpay 1968:59, pl.45.

¹⁶ Çilingiroğlu, Erdem 2009:4.

¹⁷ Барди́ман 240–241.

¹⁸ Պողոսյան 2023:190:

Կին-զինվորականների գոյությունն է փաստում Հայաստանի հյուսիսում՝ Բովեր 1 հնավայրում (Շնող, Լոռու մարզ) անցկացված պեղումներում հայտնաբերված (№ 17 դամբարան, թվագրվում է մ.թ.ա. 8–6 դդ.) բարձր խավի երիտասարդ կնոջ թաղումը, ով հավանաբար եղել է զինվորական և մասնակցել պատերազմների՝ դատելով մարմնի մասունքների վրա առկա վնասվածքներից¹⁹:

Գեղարվեստական տեսակետից բավական հետաքրքրական են բրոնզե պաշտամունքային թիթեղների և որոշ գոտիների պատկերագրական հորինվածքները, որոնցում ներկայացված են ազնվական կանայք, միգուցե աստվածուհիներ կամ քրմուհիներ, ինչպես նաև տարբեր խավերի կանայք: Քրմուհիների վերաբերյալ գրավոր տեղեկությունները բացակայում են, սակայն իգական սեռի հոգևոր դասի ներկայացուցիչների կերպարներ կարելի է հավանաբար տեսնել գոտիների, կախազարդերի, պաշտամունքային թիթեղների գեղարվեստական հարդարանքում: Որոշ ենթադրությունների համաձայն, ուրարտական երկրպագության և ընծայաբերության տեսարաններում աստվածությունների առջև պատկերված կանայք կարող են լինել քրմուհիներ²⁰: Գեղարվեստական հորինվածքներում հեղման կամ ընծայաբերության տեսարաններում, կարելի է ենթադրել, որ պատկերված են տաճարային սպասավորներ կամ սրբազան կերպարներ: Պատկերագրական հորինվածքներից դատելով՝ կանայք Վանի թագավորության հոգևոր և աշխարհիկ կյանքում ունեցել են բարձր դիրք²¹: Դա են փաստում նաև պետական դիցարանում ներկայացված տարբեր դիրքի աստվածուհիները: Տարբեր գոտիների պատկերադաշտերում ներկայացված են կանանց մասնակցությամբ տոնակատարություններ, ծիսակարգեր: Այդ տեսարաններից դատելով՝ կանայք գործուն դերակատարում են ունեցել դեկորատիվ-կիրառական արվեստի ստեղծման գործում (ինչպես օրինակ գորգագործություն), երաժշտության և պարի ասպարեզում, հոգևոր և տաճարային կյանքում (քրմուհիներ, տաճարային ծառաներ): Գեղարվեստական հորինվածքներում բազմիցս հանդիպում են նաև ազնվական կանանց, կամ միգուցե աստվածուհիներին սպասարկող քրմուհիների պատկերներ: Մերի դռան սեպագիր արձանագրության վերծանության արդյունքում հայտնի է շուրջ 35 դիցուհի²², որոնք ներկայացված են արական սեռի աստվածների թվարկումից հետո և միայն նրանց հետ համատեղ, նրանց մատուցվող ավելի քիչ գոհերի քանակով: Արդյո՞ք սա խոսում է տղամարդու համեմատ կանանց սոցիալական դիրքի ստորադասման ավանդույթից, ինչ-

¹⁹ Khudaverdyan, Yengibaryan, Hobosyan, Hovhanesyan, Saratikyan 2020:119–128.

²⁰ Jakubiak 2023.

²¹ Погосян 2017:79.

²² Հմայակյան 1990:26–27:

պես ենթադրում է Ս. Հմայակյանը²³: Պատկերագրական հորինվածքներում կարելի է նկատել, որ արական սեռի սրբություններին երկրպագության տեսարաններում ներկայացված են թե՛ կանայք և թե՛ տղամարդիկ, իսկ կին աստվածուհիների դեպքում միայն կանայք (նկ. 76–78):

Ուրարտական թագավորությունում կանանց զգեստը հայտնի է առավելապես երկչափ ու եռաչափ գեղարվեստական հորինվածքներից: Թեև հայտնի գեղարվեստական հորինվածքներն առավելապես կրում են պաշտամունքային պատկերագրություն և բնույթ, սակայն ելնելով պատկերների ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ կանանց և նրանց աստվածուհիների հագուստի ձևերում էական տարբերություններ չեն եղել: Ազնվական տիկնոջ կերպար հայտնի է Կարմիր բլուրից գտնված մի փայտե արձանիկի օրինակով՝ պատկերված իր հայելու, ուլունքաշարի և հովհարի հետ միասին²⁴: Պատկերագրական որոշ հորինվածքներ փաստում են ուլունքազարդերի ոչ միայն գեղագիտական, այլև որոշակի պաշտամունքային բնույթը: Դրա վառ վկայությունն են որոշ զոտիների հորինվածքներում ծեսի մասնակիցների ձեռքի ուլունքաշարերը: Չի բացառվում, որ դրանք կատարել են այսպես ասած պաշտամունքային համրիչի դեր, կիրառվել են ծիսակարգերում, ինչպես հետագա կրոնական այլ մշակույթներում: Կանանց տոնական զգեստն իր մետաղական դեկորատիվ հավելումների պատճառով հավանաբար եղել է բավական ծանր²⁵: Հագուստի մասին եռաչափ պատկերացում կարելի է կազմել Վանի Դարաբեյ ամրոցից հայտնաբերված բրոնզե արձանիկի օրինակով (նկ. 79): Աջ ձեռքն ուղղված է բաց ափով վեր, ձախում առկա է անցք՝ որում թերևս դրված է եղել ճյուղ²⁶: Այս նույն կերպավորմամբ կնոջ պատկեր հայտնի է նաև կանգնած տարբերակով արձանիկ: Ուրարտագիտության բնագավառում վերոհիշյալ արձանիկը ընդունված է համարել որպես Ուարուբաինի աստվածուհու պատկերագրական մարմնավորում: Միերի դռան սեպագիր արձանագրության համաձայն Ուարուբաինին Վանի թագավորության դիցարանի գլխավոր Խալդի աստծո զույգն է և դիցարանի գլխավոր աստվածուհին²⁷: Նրա անունը մշտապես հիշատակվում է շինարարությունների կամ այգի տնկելու վերաբերյալ սեպագիր արձանագրություններում: Վիճահարույց է արդյո՞ք արձանիկը ներկայացնում է աստվածուհու, թե մահկանացու կնոջ²⁸: Միգուցե ներկայացված է ուրարտական դիցարանի մեկ այլ աստվա-

²³ Հմայակյան 2001:59:

²⁴ Հմայակյան, Հովսեփյան, Հմայակյան, Տիրացյան 2023:105:

²⁵ Հմայակյան, Հովսեփյան, Հմայակյան, Տիրացյան 2023:103:

²⁶ Пигровский 1959:82.

²⁷ Հմայակյան 1990:109:

²⁸ Barnett 1950:29; Çevik 2012.

ծուռու կերպար²⁹: Բրոնզի վրա վարպետը բավական հմտորեն փոխանցել է գործվածքի մակերևույթը և զգեստի ուրվագծային առանձնահատկությունները: Կերպարի հագին մինչ արմունկները հասնող թևքերով, պարանոցի բացվածքով, քառանկյուն զարդանախշերով գործվածքից երկար զգեստ է: Ուրարտական գեղարվեստական հարդարանքում ամենատարածվածը ծաղիկ-վարդյակ մոտիվն է, որը կիրառվել է ոչ միայն գործվածքներում և հարդարման պարագաներում, այլև կոթողային արվեստում (որը փաստում են Այանիսի պեղումներում հայտնաբերված ոսկեգոծ բրոնզե վարդյակները³⁰): Կուրծքը հարդարված է ուլունքաշարով (թվում է, որ այն ոչ թե ուլունքաշար է, այլ օղակազարդ մետաղական շղթա) և առյուծաձև խաչ-կախիկով (Բ.Պիոտրովսկու ենթադրությամբ այն ունի փոքրիկ դաշույնի ձև³¹): Իսաչաձև կախիկն ամենայն հավանականությամբ ասոցացվել է արևի, կրակի և պտղաբերության գաղափարի հետ³²: Կա ենթադրություն, որ առյուծաձև զարդը շքասեղ է³³: Նմանատիպ շքասեղների բազմաթիվ օրինակներ են հայտնի³⁴ (նկ. 31, 32) (այդ թվում նաև հայտնի է առյուծամարմին շքասեղ³⁵): Առյուծաձև զարդերը Հայկական լեռնաշխարհում հայտնի են նաև Լոռի Բերդում գտնված առյուծակերպ ուլունքի օրինակով, որի կատարման ոճն ու եղանակը կապվում են ուրարտականի հետ³⁶: Նման խաչեր կարելի է տեսնել նաև ասորական պատկերագրական հորինվածքներում՝ օղերի կամ կախազարդերի ձևով³⁷: Աստվածուհու կրծքամասում առյուծաձև զարդ-կախիկի խորհրդանշային հիմքերը թերևս գալիս են անհիշելի ժամանակներից և համադրելի են մի ժայռապատկերում ներկայացված կին-մայր կերպարի կրծքամասում պատկերված առյուծի հետ³⁸: Հայկական լեռնաշխարհի մարդկանց հնագույն պատկերացումներում կինը հավանաբար արտացոլել է մայրության և պտղաբերության գաղափարը, որի վկայությունն են ժայռապատկերներում երկնային լուսատուների, խորհրդանշական արարածների, ինչպես նաև առյուծների հետ համատեղ ներկայացված կանանց կերպարները³⁹: Թուփրակ-կալեից գտնված ոսկյա մեդալիոնի հորինվածքում ներկայացված նույնանման կերպարի հետ համեմատությամբ (նկ. 80), կարելի է եզրակացնել, որ արձանիկի ձեռքում եղել է կենսաց ծառի

²⁹ **Բաղայան** 2018 (ա):118:

³⁰ **Batmaz** 2013:68,70 (fig. 7).

³¹ **Пиотровский** 1962:82.

³² **Есаян** 1968:255–260.

³³ **Zahlhaas** 1991:185.

³⁴ **Yığıtpaşa** 2023.

³⁵ **Հայաստանի պատմության թանգարան** 2018:192:

³⁶ **Գևեջյան** 2007:149:

³⁷ **Heйхардт** 1975:4–5.

³⁸ **Մուղղուլյան** 1985:67:

³⁹ **Մարտիրոսյան** 1981:

ճյուղ⁴⁰, որն ըստ երևույթին ասոցացվել է պտղաբերության և բուսականության հետ⁴¹: Մեդալիոնի պատկերադաշտում պտղազարդային ոճավորմամբ հորիզոնականը ևս հավանաբար ասոցացվում է պտղաբերության գաղափարի հետ⁴²: Կերպարային նույն լուծումը կրկնվում է երկչափ և եռաչափ տարբեր գեղարվեստական հորինվածքներում՝ թե՛ աստվածուհու և թե՛ նրան երկրպագողների մարմնավորումներում: Ամենայն հավանականությամբ կանայք և մայրերը Վանի թագավորությունում ընկալվել են ինչպես իրենց գլխավոր Ուարուբահինի աստվածուհին, որը Հ. Մարտիրոսյանի ենթադրությամբ եղել է Մեծ Մայր, ինչպես նաև երկնքի, հավերժական ջրերի և բուսականության աստվածուհին⁴³: Թեև ընդունված է մեդալիոնի հորինվածքը դիտարկել որպես Ուարուբահինի աստվածուհուն երկրպագելու տեսարան, ժամանակին ոմանք ենթադրել են, որ միգրացե պատկերված են թագուհին և իր սպասուհին⁴⁴ (սպասուհու դեպքում վիճելի է ազնվականին հատուկ աստվածային հագուստի տիպը): Արձանիկի զգեստն առաջամասում ունի դեկորատիվ կտրվածք, եզրերը մշակված են երկշառք ծոփազարդով: Ըստ Բ. Պիոտրովսկու, այն նման է ասուրական օրինակներին⁴⁵: Ծնկների հատվածում դեկորատիվ կտրվածքից դատելով զգեստը երկմաս է⁴⁶: Վերին զգեստը կողքային հատվածում ունի ընդգծված միացման կարաբաժին: Թևքերն ամենայն հավանականությամբ ձևված են ամբողջական կտրվածքով (սկ. 81): Կանանց հանդերձի այս ձևը մշտապես կրկնվելով ուրարտական տարբեր հորինվածքներում՝ վկայում է, որ այն ժամանակաշրջանում ընդունված ավանդական զգեստի տիպ է: Որոշ կախազարդերում պատկերված կանանց կերպարների արտաքին նկարագրից դատելով, կանանց զգեստի ետնամասում կիրառվել է հավանաբար նաև երկայնափեշ (երկարատուտք, շլեյֆ)⁴⁷:

Կանացի հանդերձի անբաժան մաս է կազմել գլխաշոր-քողը, որը դատելով պատկերներից՝ պատրաստվել է հիմնականում հանդերձին համապատասխան գործվածքից (հավանաբար դաջածո կամ ասեղնագործ), ունեցել է տարբեր երկարություն, զարդարվել եզրամասի ծոփազարդմամբ: Վանի թագավորությունում գլխաշորի ձևվածքը եղել է ամենայն հավանականությամբ քառանկյուն կամ ուղղանկյուն գործվածքից, ինչպես հարևան ասուրական ծոփազարդ թիկնոց-

⁴⁰ Погосян 2017:80.

⁴¹ Лосева 1962:310.

⁴² Մնացականյան 1955:32:

⁴³ Մարտիրոսյան 1978:77:

⁴⁴ Տիրացյան 1964:158:

⁴⁵ Пиотровский 1940:90.

⁴⁶ Պողոսյան 2017:89:

⁴⁷ Պողոսյան 2017:85:

ծածկոցների դեպքում⁴⁸, որը գրվել է գլխին՝ ծածկելով նաև մարմինը: Կանայք գլխաշոր-քողն ամրացրել հերակալների և շքասեղների միջոցով: Ասվածի վկայությունն են հնագիտական պեղումներում հայտնաբերված տարբեր տիպի շքասեղներն ու հերակալները⁴⁹: Գլխի ծածկոցն ամենայն հավանականությամբ ունեցել է կարևոր նշանակություն՝ հանդիսանալով սոցիալական կարգավիճակի ցուցիչ: Հետաքրքիր է, որ հետագա հայկական տարագում, ամուսնացած կանանց և երիտասարդ աղջիկների գլխի հարդարանքը տարբերակվել է ձևով, զարդանախշմամբ և գույնով: Հայոց մեջ աղջիկները մինչ հասունություն գլխաբաց են եղել, իսկ ամուսնությունից հետո պարտադիր կրել են գլխաշոր: Այն հարդարանքի տարր լինելուց բացի, Հայկական լեռնաշխարհում դարեր շարունակ ունեցել է նաև ծիսական, տարիքային և կնոջ սոցիալական դրությունը հատկանշող գործառույթ⁵⁰: Տրամաբանական է ենթադրել, որ նախաքրիստոնեական Հայաստանում, ինչպես միջնադարում, գլխաշորը կնոջ հասունությունն է խորհրդանշել⁵¹: Հայոց մեջ գլուխը կապած կինը համարվել է նշանված կամ ամուսնացած: Օրինակ Սասունում գլխաշորի՝ որպես աղջկա տարիքային հասունացման և ամուսնացած լինելու խորհրդանշական վկայությունն է՝ նշանադրեքին խնամախոսների «եկել ենք լաչակը խնդրելու» արտահայտությունը⁵²: Այս առումով հատկանշական է հայոց ժողովրդական էպոսում Մսրա Խաթունի կողմից Մհերին ուղարկված գոտին ու գլխաշորը՝ որպես ամուսնության առաջարկություն⁵³: Որոշ ուսումնասիրությունների համաձայն հնում կանանց գլուխը ծածկելու սովորույթը պայմանավորված է եղել մազերն օտարների աչքից թաքցնելու ավանդույթով, քանի որ հնում դրանց տրվել է մոզական նշանակություն՝ աղերսվելով բուսականության և արգասավորության գաղափարին⁵⁴: Տարբեր մշակույթներում գլուխը համարվել է մարդու մարմնի սրբազան հատվածը և անգամ գոյություն են ունեցել դրան նվիրված հատուկ ծեսեր⁵⁵: Ս. Հմայակյանի ենթադրությամբ Վանի թագավորությունում աղջիկների համար գլխաշորը պարտադիր չի եղել⁵⁶: Կանանց և աղջիկների հանդերձի կերպարային տարբերակման վառ օրինակ են որոշ պաշտամունքային թիթեղներում և գոտիներում ներկայացված գլխաբաց օրիորդների պատկերները: Վանի թագավորության կանանց կերպարային լուծումներում գլխաշորի նշանակությունը հասկանալու համար համեմա-

⁴⁸ **Houston, Hornblower** 1920:50, fig. 29.

⁴⁹ **Հմայակյան** 2007:172–185:

⁵⁰ **Ստեփանյան** 2006:36:

⁵¹ **Ստեփանյան** 2007:21:

⁵² **Նահապետյան** 2009:80:

⁵³ **Սասունցի Դավիթ** 1961:119:

⁵⁴ **Гаген-Торн** 1926:87.

⁵⁵ **Փրօքեր** 1983:222–228.

⁵⁶ **Հմայակյան** 2005:7:

տություն կարելի է կատարել խեթական տեքստերի հետ, որոնցում աղջիկները մաքրություն և կուսություն են խորհրդանշել, իսկ կանայք մայրական մոգական ուժ⁵⁷: Ծածկոցը, որով ծածկվել են կանայք կոչվել է «kariulli» կամ «kuressar»⁵⁸: Դա իրենից ներկայացրել է կարճ կամ երկար սավան, կարմիր, կապույտ կամ սպիտակ (ըստ սոցիալական դիրքի), որը ծածկել է մարմինը գլխից ոտքերը: Այն հանդիսացել է հարսանեկան ավանդական հանդերձի բաղադրիչ նաև հետագա դարերում տվյալ տարածքի կանանց տարագում: Հատկանշական է, որ ասուրական հասարակությունում ևս բարձրաշխարհիկ կանայք կրել են նուրբ գործվածքից քող-ծածկոց՝ գլխին հատուկ ճակատակալով ամրացված⁵⁹: Ամուսնացած կանանց և աղջիկների սոցիալական կարգավիճակի տարբերակման ավանդույթ գոյություն է ունեցել նաև հին արևելյան այլ մշակույթներում⁶⁰: Դեռատի աղջիկների մասին Վանի թագավորությունից մեզ տեղեկություններ չեն հասել ցավոք, իսկ օրինակ միջագետքյան աղբյուրներից տեղեկանում ենք, որ Բաբելոնում հարգված ընտանիքներում ըստ ավանդության կնության էին առնում կույս, այսպես կոչված մաքուր աղջիկներին⁶¹: Ասորեստանի գրավոր աղբյուրներում կա հիշատակություն առ այն, որ կանանց, դստերին և այրիներին օրենքը թույլատրել է կրել գլխաշոր, իսկ անբարո կանանց և ստրուկներին արգելվել է (գլխաշորով կանայք փողոցում ծածկել են նաև դեմքը)⁶²: Գլխաշորի հետ կապված են եղել նաև ամուսնական ծիսական որոշ արարողություններ: Գլխաշոր կրելը մեծ կարևորություն է ունեցել ըստ երևույթին նաև հելլենիստական Հայաստանի ավանդական պատկերամտածողության մեջ, որի վառ վկայությունն են հանդիսանում Հայաստանի պատմության թանգարանում պահվող մ.թ. 1-2-րդ դդ. թրծակավե արձանիկները, որոնց կերպարային լուծումը նույնական է Ուարուբահինի⁶³ (սկ. 82), ինչպես նաև հետագա քրիստոնեական Տիրամոր հետ: Այս ավանդույթը թերևս հետագայում փոխանցվել է նաև հայկական քրիստոնեական ժամանակաշրջանի ժողովրդական տարազին: Վաղ քրիստոնեության ժամանակներում տաճար այցելելիս կանանց համար պարտադիր է եղել գլխաշոր կրելը⁶⁴: Գլխաշորի ավանդույթը ինչպես նշում են օտարերկրյա ճանապարհորդները հայուհիները կրել են փողոցում մինչ 19-րդ դար⁶⁵: Հայոց մեջ պահպանված ավանդույթի համաձայն սրբավայրեր այցելող կանայք գլխաշոր էին նվիրաբե-

⁵⁷ Pringle 1993:148.

⁵⁸ Pringle 1993:152–153.

⁵⁹ Готтенрот 2009:47.

⁶⁰ Бардиман 1990:236.

⁶¹ Stol 2016:13–16.

⁶² Pendergast 2004: 62.

⁶³ Պողոսյան 2023:188:

⁶⁴ Бардиман 1990:236.

⁶⁵ The Book of costume 1847:386–387.

րում տաճարներին⁶⁶: Գլխաշորը զարդային նշանակությունից բացի, Հայկական լեռնաշխարհում ունեցել է նաև ծիսական գործառույթ⁶⁷:

Ուրարտական դեկորատիվ-կիրառական արվեստում գեղարվեստական հարդարմամբ և սյուժետային հարուստ պատկերացանկով աչքի են ընկնում հատկապես կանանց մասնակցությամբ տոնահանդեսներ պատկերող գոտիները (սկ. 13–19): Բարձրաշխարհիկ կանանց կյանքին կամ աստվածուհիներին նվիրված ծիսակարգերում իգական սեռի պատկերների գերակայությունից հասկանալի է, որ ամենայն հավանականությամբ այսօրինակ գոտիները պատկանել են կանանց: Տարբեր գոտիների գեղարվեստական հարդարանքում ներկայացված գլխավոր կերպարը, որին ուղղված են բոլոր գործողությունները, հանդիսանում է սովորաբար գահին բազմած կերպարը: Չի բացառվում, որ գոտիների հարդարանքում տոնածիսական տեսարաններում ևս ներկայացված է ուրարտական դիցարանի գլխավոր դիցուհին՝ Ուարուբաինին կամ ծեսի շրջանակում նրա հետ նույնացող տերության թագուհի-քրմուհին: Գլխավոր կերպարը գոտիների հորինվածքներում մշտապես առանձնանում է գլխաշորի առկայությամբ⁶⁸: Ըստ Ե. Գրեկյանի, որոշ տեսարաններ կարող են լինել հարսանեկան արարողության դրվագներ⁶⁹: Միգուցե ամուսնական տոնակատարությունները նմանեցվում էին սրբազան աստվածային ամուսնության ծեսին, որը հնում տեղի էր ունենում Նոր տարվա տոնախմբությունների ժամանակ⁷⁰: Այս առումով դիտարժան է նաև մի պատկերադրվագ, որտեղ հորինվածքի գլխավոր կերպարը երկար զգեստով և գլխաշորով կին է, որի գլխավերևում երկու կողմից ծածկոց են պահում: Կա տեսակետ, որ այն արևից կամ անձրևիցից պաշտպանելու համար է⁷¹: Սակայն չի բացառվում նաև, որ այն կարող է լինել ծեսի համար նախատեսված հատուկ ծածկոց: Ասվածի համար կարող է փաստ լինել այն, որ գլխավոր կերպարը (Ե. Գրեկյանի ենթադրությամբ՝ թագուհի կամ աստվածուհի⁷²) ոչ թե ուղղակի քայլում է, այլ ձեռքերը բարձրացված են երկրպագության դիրքով և ակնհայտ է, որ ներկայացված է կրոնական սյուժե: Գործվածքը կարող է լինել աստվածուհուն նվիրաբերելու, կամ հարսանեկան ծեսում որոշակի գործողության համար: Չի բացառվում, որ որոշ գոտիների պատկերագրության մեջ մանածագործության դրվագները ևս կապված են Ուարուբաինի աստվածուհու հետ, ով ըստ Ս. Հմայակյանի կարող էր հանդիսանալ նաև արհեստներն ու արվեստները հովանավոր-

⁶⁶ Ավագյան 1983:73:

⁶⁷ Ստեփանյան 2006:36:

⁶⁸ Ziffer 2002:645.

⁶⁹ Գրեկյան 2008:293:

⁷⁰ Բաղայան 2014 (ա):

⁷¹ Çavuşoğlu, Işık, Gökce 2014:245.

⁷² Գրեկյան 2008:294:

րող դիցուհի⁷³: Օրինակ հին Հունաստանում, Աթենասին նվիրված տոներին կանայք հատուկ ծիսական գործվածքը շքերթի ընթացքում տանում և նվիրաբերում էին տաճարին: Ուրարտական գոտու պատկերադաշտում առանց գլխածածկոցի երիտասարդ աղջիկները, հավանաբար սպասուհիներ են (թեև չի բացառվում, որ նրանք հարսանեկան ծեսին մասնակցող երիտասարդ աղջիկներն են, հարսի ընտանքի անդամներ): Նման ծեսերն անհայտ են հին Մերձավոր Արևելքի այլ մշակույթներում⁷⁴: Չի բացառվում, որ ուրարտական գոտիների դրվագներում ներկայացված է աստվածուհու կամ հարսնացուի համար նախապատրաստվող գլխաշորի հետ կապված արարողություն (օրինակ հարսնացուի նախապատրաստման կամ գլխաշորի հետ կապված խորհրդանշական ծես), որն ուղեկցվում է երգ ու պարով: Մի դրվագում ներկայացված է ընծայաբերության տեսարան, որի մասնակիցների ձեռքում տարվում են ուլունքաշարեր, կոշիկներ և այլն: Չի բացառվում, որ դրանք ևս հարսնացուի օժիտի մաս են: Այստեղ պատկերված կանանց հագին ուրվագծված են գոտեկապ-գոգնոցներով կիսաշրջագեատներն ու գոտուց կախված երկար ուլունքաշարերը: Ուրարտական գոտիների պատկերագրությունը հիշեցնում է միջնադարյան հայկական ավանդական ծեսերը, երբ հարսանեկան տոներին սահմանվել են հեթանոսական ավանդույթից եկող ավանդույթներ, պարերն ու երգերն էլ եղել են անպակաս: Ուշագրավ է, որ միջնադարում ևս այս ծեսին մասնակցել են երիտասարդ աղջիկները⁷⁵: Չի բացառվում, որ ուրարտական ժամանակներում, ինչպես և հետագայում, եղել է տոնակարգում սահմանված որոշակի օր, երբ հանվել է հարսի քողը: Հարսանեկան գլխաշորին տրվել է կարևոր նշանակություն նաև հայոց մեջ: Որոշ շրջաններում գլխաշորը պահվում էր սրբությամբ մինչ կյանքի վերջ և վրան անգամ երդվում էին⁷⁶: Այս առիթով կարելի է ենթադրել նաև, որ նման գոտիները միգուցե եղել են հարսնացուի օժիտի բաղկացուցիչ (ինչպես հետագա հայոց ավանդույթում⁷⁷): Որոշ գոտիների դրվագներում կարծես պատկերված են նաև թոնրի մոտ հաց թխող, և դագաձի առջև հավանաբար կարպետ գործող կանայք⁷⁸: Հացթուխ կանանց մասին հիշատակություն կա Խալդի աստծոն ուղղված արամեերեն մի տեքստում⁷⁹: Ուրարտական վերոհիշյալ բրոնզե գոտու հորինվածքում՝ կանայք թեք հաստոցի առջև գործվածք են գործում կամ թել մանում, ինչպես միջնադարյան հայկական ավանդույթում (ըստ Ե. Գրեկյանի պատկերված են նաև մաքոք-

⁷³ Հմայակյան 1990:38:

⁷⁴ Calmeyer 1991:316.

⁷⁵ Հացունի 1936:76:

⁷⁶ Ավագյան 1983:77:

⁷⁷ Ավագյան 1983:66:

⁷⁸ Գրեկյան 2008:293:

⁷⁹ Հմայակյան, Հովսեփյան, Հմայակյան, Տիրացյան 2023:105:

ներ⁸⁰): Վանի թագավորությունում մանածագործության վերաբերյալ սահմանափակ գրավոր աղբյուրների պայմաններում բավական արժեքավոր փաստ է հանդիսանում Թոփրակ-կալե հնավայրից հայտնաբերված տեքստը, որում նշված է պալատ-տաճարի վեց տասնյակից ավել մանածագործների մասին⁸¹ (այն, որ կին մանածագործների մասին է խոսք գնում, վկայում է «MUNUS» շումերական գաղափարագիրը): Պալատական համալիրներում ուստայնագործ վարպետներ ունենալու սովորույթը հետագա միջնադարում փաստում են Դվինի իշխանական տանը հայտնաբերված հնագիտական գտածոները⁸²: Սրբազան հագուստի ավանդույթ գոյություն է ունեցել դեռևս Վանի թագավորությունում՝ դատելով Մուծածիրի տաճարում պահվող աստվածություններին նվիրաբերված հագուստի մասին Սարգոն 2-րդ արքայի հիշատակությունից: Չի բացառվում, որ Վանի թագավորությունում սրբազան հագուստն արտադրվել է տաճարային համալիրներին կից ուստայնագործների կողմից, ինչպես միջնադարում վանքապատկան արհեստանոցներում: Չի բացառվում նաև, որ գոտու պատկերաշարում դագաճի առջև կանայք ծեսի գլխաշորի համար նախատեսված գործվածքն են հյուսում, այլ ոչ թե սովորական գործվածք կամ կարպետ: Գրավոր աղբյուրներից հայտնի է, որ Մերձավոր Արևելքում մանածագործությունը հատուկ է եղել առավելապես բարձրաշխարհիկ կանանց օրինակով⁸³ (ինչպես էլամական կամ խեթական մշակույթներում⁸⁴), ուստի կարելի է ենթադրել, որ նման հորինվածքներում պատկերված են Վանի թագավորության ազնվագարմ կանայք: Հայոց մեջ մեծ էր կնոջ դերը գործվածք ստանալու գործում: Աղջիկները մանուկ տարիքից սովորում էին բուրդ գգել, թել մանել, մասնակցում էին գործվածքի ստացման աշխատանքներին⁸⁵: Հայկական հանդերձի տարբեր դետալների զարդանախշման մեջ ևս կարելի է նկատել ուրարտական արվեստից փոխառված ժառանգորդականության միտումներ: Բացի դա, ուրարտական հանդերձի զարդանախշումներում կիրառված են թե՛ ժամանակաշրջանի կերպարվեստում տարածված զարդամոտիվները, և թե՛ նախորդ դարաշրջաններից փոխառված պատկերաձևեր, ինչպես օրինակ բրոնզեդարյան խեցեղենի գեղարվեստական հարդարանքում է:

Ինչ վերաբերվում է ուրարտական թագուհիների՝ խույր-թագ կրելուն, հարցը խնդրահարույց է: Կանանց գլխի հարդարանքներ հին Արևելքում հայտնի են թե՛ եգիպտոսից և թե՛ միջագետքյան մշակույթներից: Ուրարտական հուշարձան-

⁸⁰ Գրեկյան 2023:29:

⁸¹ Çavuşoglu, Işık, Gökce 2014: 249; Գրեկյան 2023:28:

⁸² Ղաֆաղարյան 1952:182:

⁸³ Çavuşoglu, Işık, Gökce 2014, 250.

⁸⁴ Darga 1992:318, fig. 304.

⁸⁵ Գրիգորյան 2011:12:

ներից դատելով՝ թագուհիները կրել են ավանդական գլխաշոր կամ գլխարկ-գլխաշոր համադրություն, ինչպես իրենց աստվածուհիների կերպարում է: Թեև չի բացատրվում նաև թագուհիների թանկարժեք մետաղներով և քարերով հարդարված գլխի հարդարանքների գոյությունը: Հայոց միջնադարյան պատմության մեջ թագուհիների թագ կրելու սովորույթը հավանաբար գալիս է Տրդատ Գ-ի արքունիքից, ում հորդորով Աշխեն թագուհին սկսել է թագ կրել⁸⁶: Չնայած իգական սեռի տարբեր աստվածությունների վերաբերյալ տեղեկություններին, Վանի թագավորության արվեստում կին-աստվածուհու կերպարային պատկերաձևերը միօրինակ են, և կարծես պայմանավորված են դիցարանի գլխավոր աստվածուհու պաշտամունքի գերակայությամբ⁸⁷ կամ ուղղակի ավանդական կնոջ կերպարի հանդեպ ունեցած պատկերացումներով: Գոտիների պատկերագրությունից պատկերացում կարելի է կազմել սպասավորների հանդերձի ձևերի մասին (միգուցե տաճարային ծառայողներ, քրմուհիներ): Չի բացատրվում, որ պատկերված են հիերոգուլներ⁸⁸, ովքեր յուրատեսակ քրմուհիներ էին (նման հունական հետերաներին), որոնք տաճարում ուսանում էին վարվեցողություն, երաժշտություն և այլն⁸⁹: Որոշ գոտիների տոնածիսական սյուժեներում կարելի է տեսնել մասնակից երաժիշտների, պարուհիների և սպասուհիների զգեստի ձևերը: Հատկապես ուշագրավ են փետրագարդ գլխի հարդարանքները և ժապավենակապ փափուկ գլխարկները: Չի բացատրվում, որ նման պատկերագրությամբ դեկորատիվ-կիրառական արվեստի տարբեր նմուշները, այդ թվում նաև գոտիները, նախատեսված են եղել աստվածուհուն ուղղված երկրպագության կամ ընծայաբերության համար⁹⁰ (համեմատության համար կարելի է դիտարկել հնագույն Միջագետքում Իշթար աստվածուհուն՝ կանանց կողմից նվիրաբերված պաշտամունքային առարկաները⁹¹): Կա նաև տեսակետ, որ գոտիների նման սյուժեն ներկայացնում է հետմահու ծես⁹²: Պատկերագրական մի դրվագում գահին բազմած կանացի կերպարի գլխաշորն ունի բավական հետաքրքիր և տարբերվող լուծում: Այն ունի գործվածքի երկայնքով ձգվող վերջույթներ, որը հիշեցնում է աստվածություն մարմնավորող շամանական զգեստավորում: Տեսակետ կա, որ կերպարն աստվածուհի է և գլխաշորը հարդարված է խորհրդանշական կրակի լեզվակներով⁹³: Չի բացատրվում, որ նման հագուստը բնորոշ է կրակի պաշտամունքի հետ կապված ծիսակատարություններին: Վանի թագավորությունում

⁸⁶ Ազատյան 2006:28:

⁸⁷ Պողոսյան 2023:186:

⁸⁸ Գրեկյան 2008:296:

⁸⁹ Հմայակյան 2001:62:

⁹⁰ Պողոսյան 2023:186:

⁹¹ Stol 2016:639–640.

⁹² Miyashita 1983:300.

⁹³ Çavuşoglu, Işık, Gökce 2014: 252.

կրակի պաշտամունքն ամենայն հավանականությամբ աղերսվել է գլխավոր աստվածությունների հետ, որոնց բոցավառ կերպարները հայտնի են տարբեր պատկերագրական հորինվածքներից⁹⁴: Կրակից բացի, նման հարդարանքը կարող է կապված լինել նաև այլ խորհրդանշանների հետ: Իրականում գործվածքի վրա դա կարող էր արտահայտվել ներկարված դեկորատիվ ժապավենով (միգուցե թելափնջեր կամ փետրագարդ): Գոտիների պատկերաշարերի ուսումնասիրությամբ կարելի է փաստել, որ Վանի թագավորությունում գործվածքի զարդանախշման մեջ լայնորեն կիրառվել են կետագարդում ու զծագարդում: Հորինվածքներից մեկում գահին բազմած գլխավոր կերպարին սպասարկողները պատկերված են կարճաթևք վարդյակազարդ զգեստով, որն ունի լայն, տարբեր գործվածքներից գոտեկապ (գոտեկապերից մեկն առանձնանում է եղևնախշ հարդարմամբ) և կիսաշրջագգեստի աջ ու ձախ հատվածներում դեկորատիվ կտրվածքներ, որին միանում է կիսաշրջագգեստի երկարատուտքի վերածվող հետևամասի դետալը: Որոշ կերպարների դեպքում տարբերակվում է զգեստի կիսաշրջագգեստի այս դետալը հիմնական զգեստի գործվածքից: Ենթադրելի է, որ զգեստի այս ձևն ունի կտրված գոտկատեղ, որին ներկարված է առանձին ձևված կիսաշրջագգեստն իր առանձին մասերով: Գոտիների, ինչպես և ուրարտական դեկորատիվ-կիրառական արվեստի այլ նմուշների վրա, առավելապես իշխում է բուսագարդը, որը հետագա հայոց տարագային համալիրի գոտիներում խորհրդանշել է պտղաբերություն⁹⁵: Գոտիների վրա կենդանիների պատկերները, չի բացառվում, որ ունեն իրենց խորհրդաբանական նշանակությունը: Հնում կենդանիների պատկերները հանդես են եկել որպես պահպանակ⁹⁶: Ըստ Թ. Քենդալի, կենդանական պատկերները հանդիսանում են պահպանական էակներ⁹⁷: Այս երևույթը թերևս փոխառվել է նաև հայկական տարագում, որում խորհրդանշական պատկերներով հարդարվում էին հագուստի որոշակի հատվածները չարքից պաշտպանելու համար (կրծամասի բացվածքը, փեշերը, քղանցքը և այլն): Ուրարտական գեղարվեստական հորինվածքներում առկա են նաև քունքագարդերի պատկերներ, որոնց եռաչափ տեսքի մասին կարելի է դատել Լոռի բերդից հայտնաբերված ոսկե շքեղ քունքագարդերի օրինակով (սկ. 36) (քունքագարդերը դրսևորվել են նաև հայկական ավանդական գլխի հարդարանքում): Կանանց հանդերձում ըստ երևույթին գործածվել է նաև տափակ գլխարկ-գդակի տիպը, որի վառ նմուշ է հանդիսանում Թոփրակ-կալեից հայտնաբերված փղոսկրե կանացի արձանիկի գլխարկաբոլորքի հատվածում վարդյակազարդ տափակ գդա-

⁹⁴ **Քաղապան** 2014 (բ):

⁹⁵ **Մարգարյան** 2001:69:

⁹⁶ **Քդոյան** 1950:60–61:

⁹⁷ **Kendall** 1977:49.

կը (նկ. 83): Սա թերևս ուշագրավ և եզակի նմուշ է Վանի թագավորության արվեստում մերկ կնոջ պատկերման (սման է միջագետքյան Իշթարի կերպավորումներին): Որոշ ենթադրությունների համաձայն Վանի թագավորությունում եղել է մերկ դիցուհու պաշտամունք⁹⁸: Հետաքրքրական է այն, որ մերկությունը լրացված է միայն գլխի հարդարանքով: Նման գլխարկներ կրել են նաև խեթական մշակույթում՝ գլխաշորի հետ և առանձին (սման է հայկական տարագում արախչիի վրա կրվող չոմբարի ձևին): Վարդյակազարդ հարդարմամբ գլխարկի այս ձևը Վանի թագավորությունում կրել են ըստ երևույթին նաև տղամարդիկ, որի վառ վկայությունն է Թոփրակ-կալեից հայտնաբերված մարդակերպ արձանիկի գլխի հարդարանքը (նկ. 41): Թերևս գլխարկի այս ձևը սահուն կիրառություն է գտել նաև հայկական տարագում: Ի դեպ հայ աղջիկների գլխարկներին ամրացվում էին զարդ-ուլունքներ չարքից պաշտպանելու համար: Միգուցե արձանիկի գլխարկի վրա ևս զարդաձևերն արվել են հատուկ խորհրդաբանությամբ: Վ. Հացունու ուսումնասիրությամբ նույն գլխարկի ձևը որոշակի տարբերությամբ համադրելի է նաև մի դրամի վրա պատկերված հայոց Էրատո թագուհու գլխի հարդարանքի հետ⁹⁹: Մեկ այլ տիպի ցածր գլխարկի ձև, փափուկ գործվածքից և նեղ բոլորակաձևով ներկայացված է Կարմիր բլուրում հայտնաբերված հախճապակե սրվակի վերնամասի կանացիակերպ հարդարանքում¹⁰⁰ (նկ. 84):

Այսպիսով, ուրարտական փոքրաթիվ գտածոների հիման վրա կատարված սույն ուսումնասիրությամբ կարելի է փաստել, որ չնայած ժամանակաշրջանին հատուկ կառուցվածքային միաստիպության և պարզության, ուրարտական հանդերձն աչքի է ընկնում ձևվածքների և գեղագիտական հարդարանքի բազմատիպությամբ: Գեղարվեստական հորինվածքները վկայում են, որ Վանի թագավորությունում հագուստի ձևերը, գործվածքը, ինչպես նաև հարդարանքի յուրաքանչյուր տարր ունեցել է կիրառական և գեղագիտական կարևոր նշանակություն: Հանդերձի համալիրում տեղ գտած ավանդական մոտեցումները, զարդարվեստի բարդ ու խորհրդանշական համակարգը, և իհարկե դեկորատիվ-կիրառական արվեստի ինքնատիպ այս բնագավառում ձեռք բերված հարուստ փորձը չեն կորսվել և իրենց տեղն են գտել նաև Հայկական լեռնաշխարհի հետագա մշակույթներում:

⁹⁸ Եսայան, Հմայակյան 1980:214:

⁹⁹ Հացունի 1923 (ձև 33):

¹⁰⁰ Пиотровский 1955:21.

ПРЕДИСЛОВИЕ

Изучение образцов урартского искусства, дошедших до наших дней из глубины тысячелетий, позволяет получить определенное представление о формах традиционной одежды, эстетических вкусах общества, а также о духовных и светских представлениях в Ванском царстве (Урарту, IX–VI вв. до н.э.). Одежда, как элемент материальной культуры, наиболее наглядно отражает особенности социальной жизни каждого исторического периода. До настоящего времени формы одежды урартской культуры, бытовавшие на Армянском нагорье в I тысячелетии до н.э., а также их влияние на формирование более позднего армянского народного костюма остаются недостаточно изученными. Актуальность темы обусловлена отсутствием в урартологии комплексного исследования, посвященного одежде¹. Типы кроя, их конструктивные особенности и функции изучены недостаточно. При ограниченности письменных источников и недостатке вещественных свидетельств данное исследование сложной системы древнеурартского костюма, включая одежду, крой, ткани и декор, было проведено на основе сравнительного анализа изобразительных памятников и их типологических параллелей. Разумеется, немногочисленные археологические находки не позволяют в полной мере передать все многообразие урартской одежды и ее цветовые сочетания. Как справедливо отмечает Г. Моруо, костюм, помимо эстетической ценности, является символом культуры и отражением образа мышления². Поскольку одежду можно рассматривать

